

Կ-201-05.12.2017,12.12.2017-SՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «հարկային մարմինների» բառերը փոխարինել «հարկային մարմնի» բառերով.

2) 3-րդ կետից հանել «՝ անկախ նրանց գործունեության ոլորտից, տարածքային պատկանելիությունից» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 10-րդ կետի «գ» և «դ» ենթակետերում «հարկվող» բառերից հետո լրացնել «կամ Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված» բառերը.

2) 15-րդ կետից հանել «գույքային իրավունքի հետ կապված» բառերը.

3) 20-րդ կետում՝

ա. «ստացվող ակտիվի գնի» բառերից հետո լրացնել «, իսկ կանոնադրական (բաժնե-հավաք) կապիտալ ներդրման դեպքում՝ կողմերի պայմանավորվածությամբ որոշված գնի, որը ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով» բառերը.

բ. «և (կամ) տեղակայման ծախսերի» բառերը փոխարինել «, տեղակայման ծախսերի և (կամ) ձեռքբերման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի» բառերով.

4) 24-րդ կետում «Օրենսգրքով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «Օրենսգրքի 108-րդ հոդվածում սահմանված եկամուտ չհամարվող տարրերի և սույն մասի 25-րդ կետի կիրառության իմաստով անձնական եկամուտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինների» բառերով.

5) 25-րդ կետի երկրորդ նախադասությունում «ֆիզիկական անձի» բառերից առաջ լրացնել «ռեզիդենտ» բառը.

6) 26-րդ կետում «24-րդ կետով սահմանված դեպքերի» բառերից հետո լրացնել «և սույն մասի 25-րդ կետի կիրառության իմաստով անձնական եկամուտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինների» բառերը.

7) 27-րդ կետում «համախառն եկամուտ՝» բառերից հետո լրացնել «հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա» բառերը.

8) 28-րդ կետում «Օրենսգրքով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «Օրենսգրքի 112-րդ հոդվածում սահմանված ծախս չհամարվող տարրերի» բառերով.

9) 32-րդ կետում «բաժնեհավաք» բառից հետո լրացնել «կամ փայահավաք» բառերը, իսկ «որպես շահույթի բաշխում» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ միջանկյալ բաշխում)» բառերը.

10) 34-րդ կետում «40-րդ գլխում» բառերը փոխարինել «10-րդ բաժնում» բառերով.

11) 35-րդ կետում «անձի» բառից հետո լրացնել «կողմից» բառը.

12) 42-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«42) ապրանքի տեղափոխություն՝ հարկ վճարողի կողմից իր առաքման վայրերի և (կամ) առաքման կետերի միջև տեղափոխվող կամ պահատվության, հանձնարարության, պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով կամ վերամշակման հանձնվող կամ վերադարձվող կամ վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքների վերամշակման արդյունքում վերադարձվող կամ որևէ առաքման վայրից կամ առաքման կետից ձեռք բերված և տեղափոխվող (այդ թվում՝ փոխադրողի միջոցով) ապրանքի տեղաշարժ՝ առանց ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի՝ մեկ անձից մեկ այլ անձին փոխանցման.».».

13) 50-րդ կետում «և (կամ) ակցիզային հարկի» բառերը փոխարինել «, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի» բառերով.

14) 63-րդ կետի «ե» ենթակետում «տեղեկությունների» բառից հետո լրացնել «՝ այդ մարմիններին ներկայացնելու դեպքերում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «համապատասխան» բառից հետո լրացնել «բաժիններում կամ» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «այսուհետ՝ նաև ԱԱՀ» բառերը փոխարինել «այսուհետ նաև՝ ԱԱՀ» բառերով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ.» ենթակետ.

«գ. կենսաթոշակային վճարը.»:

Հոդված 6. Օրենսգրքի 8-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «շահութահարկով» բառից հետո լրացնել «, իսկ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով՝ արտոնագրային հարկով» բառերը.

2) 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների,

2) արտոնագրային հարկի համակարգի շրջանակներում՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով, կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող արտոնագրային հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող արտոնագրային հարկով.»

3) 3-րդ մասի 3-րդ կետում «հարկումից» բառից հետո լրացնել «, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7. Հարկի հաշվարկը կատարվում է հայկական դրամով:»:

Հոդված 8. Օրենսգրքի 15-րդ հոդվածի՝

1) վերնագրում «մեթոդները» բառից հետո լրացնել «և հաշվառման եղանակները» բառերը.

2) 3-րդ մասի 6-րդ կետում «հարկի հիմնական» բառից հետո լրացնել «դրույքաչափից տարբերակված» բառերը.

3) 3-րդ մասի 7-րդ կետում «չնշված» բառը փոխարինել «նշված» բառով:

Հոդված 9. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «արտահանման մաքսային հայտարարագրի» բառերից հետո լրացնել «գրանցման» բառը:

Հոդված 10. Օրենսգրքի 19-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «իրավունքից» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում Օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ԱԱՀ-ի գումարների (կամ դրանց մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու մասին գրավոր հայտարարության ներկայացման դեպքերի վրա:»:

Հոդված 11. Օրենսգրքի 27-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «իրականացման ժամանակահատվածից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի» բառերը.

2) 1-ին մասի 8-րդ կետում «ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ» բառերից հետո լրացնել «ոչ ռեզիդենտ» բառերը.

3) 4-րդ մասի 1-ին կետում «ցանկացած» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետությունում գտնվող» բառերը.

4) 5-րդ մասի 1-ին կետում «իրավական» բառը փոխարինել «իրավաբանական» բառով.

5) 10-րդ մասի 1-ին կետի՝

ա. «ա» ենթակետում «տարածքում» բառից հետո լրացնել «ապրանքների մատակարարման,» բառերը.

բ. «գ» ենթակետում «ծեռքերում» բառից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծում» բառերը.

գ. «դ» ենթակետում «տարածքում» բառից հետո լրացնել «ապրանքների մատակարարում,» բառերը.

Հոդված 12. Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում «ունի» բառը փոխարինել «ունեն» բառով:

Հոդված 13. Օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետ.

«4.1) իրականացնել հարկ վճարողի գործարքների մոնիտորինգ, գործունեության այլ ոլորտային վերլուծություններ և դրանց արդյունքներով գնահատված ռիսկերի նվազեցման վերաբերյալ ծանուցագրերի միջոցով իրազեկել հարկ վճարողներին.»:

Հոդված 14. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետում «տրանսպորտային միջոցը վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների, որոնց մատուցման վայրը որոշվում է սույն մասի 6-րդ կետով սահմանված կարգով» բառերը փոխարինել «շարժական գույքի վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների)» բառերով.

2) 4-րդ կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե. շարժական գույքը (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների, որոնց մատուցման վայրը որոշվում է սույն մասի 6-րդ կետով սահմանված կարգով) վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների):»:

Հոդված 15. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետից հանել «կամ ֆինանսական ակտիվի» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրենսգրքի կիրառության նպատակով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքը ճշգրտվում է հետևյալ դեպքերում.

1) գործարքի առարկան պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանք է.

2) գործարքի առարկան հանրային կամ կոմունալ ծառայություն է, և գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրով նախատեսված է, որ այդ ծառայությունների ծավալը հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո կարող է ճշգրտվել.

3) գործարքի առարկա համարվող ապրանքի քանակը, ծավալը և (կամ) որակական հատկանիշները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, ստուգվում են գնորդի կողմից ապրանքի ընդունման պահին, և պարզվում է, որ դրանցից որևէ մեկը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պայմաններին, որի հետևանքով ապրանքը (կամ դրա մի մասը) ենթակա է մասնակի ընդունման կամ վերադարձման.

4) գործարքի առարկա համարվող ապրանքները մատակարարվել են ավել, քան սահմանված է եղել հաշվարկայինել ակարարվե, և գնորդի կողմից ավել մատակարարված ապրանքներն ընդունվել են.

5) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման այն գործարքների դեպքում, երբ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների ծավալը գործարքի ավարտին ավել կամ պակաս է սկզբնապես դուրս գրված համապատասխան հաշվարկային փաստաթղթով նախատեսված ծավալից, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա. աշխատանքները կամ ծառայությունները արդեն իսկ (փաստացի) կատարվել կամ մատուցվել են գործարքի իրական պայմաններին համապատասխանող՝ դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշված պայմաններով,

բ. աշխատանքի կամ ծառայության բովանդակությունն այնպիսին է, որ աշխատանքի կամ ծառայության արդյունքի հետ հանձնումը հնարավոր չէ:

Դուրս գրված այն հարկային հաշվի կամ հաշիվ վավերագրի մասով, որի դուրսգրման օրը ներառող հարկային տարվանից անցել է երեք հարկային տարի, չի կարող դուրս գրվել համապատասխանաբար ճշգրտող հարկային հաշիվ կամ ճշգրտող հաշիվ վավերագիր:»:

Հոդված 17. Օրենսգրքի 44-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում առաջին «տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու» բառերը փոխարինել «դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու» բառերով.

2) 2-րդ մասում՝

ա. «երրորդ հարկային տարին լրանալուց հետո» բառերից հետո լրացնել «, (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի)» բառերը.

3) 5-րդ մասում՝

ա. «պարտավորությունները» բառից հետո լրացնել «կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարները» բառերը.

բ. «անցել է երեք տարի» բառերից հետո լրացնել «, եթե այլ բան նախատեսված չէ սույն մասով» բառերը.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն մասով սահմանված ժամկետի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի միջև ընկած ժամանակահատվածում հարկ վճարողի կողմից կարող է ներկայացվել սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետում ներառված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները նվազեցնող կամ հաշվանցվող

(պակասեցվող) գումարները ավելացնող հարկային հաշվարկ, որը հարկային մարմնի կողմից կարող է ստուգվել այդ հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում:».

4) 6-րդ մասի 1-ին նախադասությունում «հարկային մարմնի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով.

5) 6-րդ մասի 3-րդ նախադասությունում «ճշտում» բառը փոխարինել «կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների փոփոխություն» բառերով.

6) 6-րդ մասի 3-րդ կետում «Ժամանակահատվածում» բառից հետո լրացնել «՝ ստուգմանը կամ ուսումնասիրությանը վերաբերող հարկի կամ վճարի գծով» բառերը.

Հոդված 18. Օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «1-ին մասով» բառերը փոխարինել «1-ին և 2-րդ մասերով» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 46-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «չմարվող հարկային պարտավորության» բառերից հետո լրացնել «(բացառությամբ տեղական հարկերի)» բառերը.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) միասնական հաշվից գումարների հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:».

3) 5-րդ մասում «բացառությամբ Օրենսգրքով» բառերից հետո լրացնել «և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով» բառերը:

Հոդված 20. Օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում «մինչև դրանց ներկայացմանը հաջորդող տասներորդ աշխատանքային օրը ներառյալ» բառերը փոխարինել «մինչև Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը, բայց ոչ ուշ, քան կազմակերպության լուծարման օրը» բառերով:

Հոդված 21. Օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում «Եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մինչև անհատ ձեռնարկատիրոջ՝» բառերը փոխարինել «Եթե անհատ ձեռնարկատերը մինչև» բառերով:

Հոդված 22. Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Հարկային մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ նշված հարկային պարտավորության չափը չի կարող փոփոխվել, եթե տեղեկատվությունը տրամադրվել է Օրենսգրքով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում:».

2) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

3) 5-րդ մասում «գույքի» բառից հետո լրացնել «և ժառանգի (ժառանգների) կողմից հարկային պարտավորությունները ստանձնելու» բառերը.

4) 6-րդ մասում «հարկային տարվա դեկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «ամսվան հաջորդող երրորդ ամսվա 20-ը» բառերով:

Հոդված 23. Օրենսգրքի 52-րդ հոդվածի՝2-րդ մասի 4-րդ կետում «ժամանակաշրջանը» բառից հետո լրացնել «կամ Օրենսգրքով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործարքի կամ գործունեության կատարման օրը» բառերը.

Հոդված 24. Օրենսգրքի 53-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «3-րդ և 4-րդ մասերով» բառերը փոխարինել «3-րդ, 4-րդ և 12-րդ մասերով» բառերը.

2) 2-րդ մասում «3-րդ մասերով» բառերը փոխարինել «3-րդ և 12-րդ մասերով» բառերը.

3) 8-րդ մասի 2-րդ պարբերության 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործունեության դադարեցման ժամանակահատվածում հարկ վճարողի կողմից գործունեությունը վերսկսելու և այդ մասին համապատասխան հայտարարություն չներկայացնելու դեպքում հարկ վճարողի գործունեությունը համարվում է վերսկսված՝ գործունեությունը փաստացի վերսկսելու օրվանից:».

4) 9-րդ մասի՝

ա. 1-ին կետում «հաշվարկումը» բառը փոխարինել «և դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկումն ու վճարումը» բառերով, իսկ «պարապուրդում» բառից հետո լրացնել «կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում» բառերը.

բ. 6-րդ կետում «դուրս գրվող» բառերից հետո լրացել «, ինչպես նաև մինչև գործունեության դադարեցումն ընկած հաշվետու ժամանակաշրջաններում կատարված բոլոր ծախսերի գծով դուրս գրված» բառերը.

գ. 7-րդ կետից հանել «մինչև գործունեության դադարեցումն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար» բառերը.

դ. 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ.

«9) շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ հայտարարության ներկայացումը:».

Ե. 10-րդ մասում «Հաշվարկված հարկի կամ վճարի վերաբերյալ հարկային» բառերը փոխարինել «Հարկային» բառով:

Հոդված 25. Օրենսգրքի 54-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում «հաշվարկները ներկայացնելու դեպքերի վրա» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի վրա» բառերը:

Հոդված 26. Օրենսգրքի 55-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի՝

ա. 1-ին կետում «պակասեցումները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը» բառերը.

բ. 2-րդ կետում «միայն ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը» բառերը փոխարինել «ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, իսկ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները) պարունակելու դեպքում նաև ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը» բառերով.

2) 4-րդ մասի 8-րդ կետում «սակագինն» բառը փոխարինել «սակագինը, առևտրային գեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային գեղչը)» բառերով.

3) 4-րդ մասի 9-րդ կետի «բ» ենթակետից հանել «պաշտոնը,» բառը.

4) 4-րդ մասի 9-րդ կետի «գ» ենթակետում «նշումը» բառից հետո լրացնել «, առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը» բառերը.

5) 4-րդ մասի 10-րդ կետի «բ» ենթակետից հանել «պաշտոնը,» բառը.

6) 4-րդ մասի 10-րդ կետի «գ» ենթակետում «նշումը» բառից հետո լրացնել «, ապրանքների նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի և ապրանքը գնորդին է հանձնվում առաքման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը» բառերը.

7) 7-րդ մասի 3-րդ կետի «բ» ենթակետից հանել «պաշտոնը,» բառը.

8) 7-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետում «նշումը» բառից հետո լրացնել «, տեղափոխվող ապրանքի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը» բառերը.

9) 12-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մաս.

«13. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող գյուղատնտեսական արտադրանքի, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող կամ վարձակալությամբ օգտագործվող գույքի, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից ձեռք բերվող ապրանքների, ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, ինչպես նաև կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրվող գույքի գծով առաջացող ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով:»:

Հոդված 27. Օրենսգրքի 56-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասի 2-րդ կետ 1-ին նախադասությունում «ծառայությունների ձեռքբերման» բառերը փոխարինել «ձեռքբերման, աշխատանքների ընդունման և ծառայությունների ստացման» բառերով.

2) 6-րդ մասից հանել «(բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնակատարը կամ գործակալը, Օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, չի համարվում ԱԱՀ վճարող)» բառերը.

3) 8-րդ մասի 1-ին կետում «օրը» բառից հետո լրացնել «, կամ աշխատանքները պետք է կատարվեն կամ կատարումը ավարտվի հաշվարկային փաստաթղթում նշված՝ աշխատանքների կատարման կամ կատարումը ավարտելու օրը, կամ ծառայությունները պետք է մատուցվեն կամ մատուցումը ավարտվի հաշվարկային փաստաթղթում նշված՝ ծառայությունների մատուցման կամ մատուցումը ավարտելու օրը» բառերը.

4) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթուղթը ապրանք մատակարարող,

աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի նախաձեռնությամբ կարող է չեղարկվել՝ հետևյալ դեպքերում.

1) հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել այն հարկ վճարողի անունով, որին ապրանք չի մատակարարվել, որի համար աշխատանք չի կատարվել և (կամ) որին ծառայություն չի մատուցվել.

2) հարկային հաշիվը դուրս է գրվել Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ.

3) Օրենսգրքի 345-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում.

4) ապրանքների մատակարարմանը, աշխատանքների կատարմանը կամ ծառայությունների մատուցմանը վերաբերող հաշվարկային փաստաթուղթը լրացվել է սխալներով, որոնք կարող են այն դուրս գրողի կամ ստացողի համար իրավական կամ ֆինանսական հետևանքներ առաջացնել (օրինակ՝ տուգանք, ծախսագրման կամ հաշվանցման արգելք).

5) հաշվարկային փաստաթղթով մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայության ընդհանուր արժեքի հաշվարկմանը մասնակցող որևէ տվյալ (քանակ (ծավալ), գին, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկի դրույքաչափ կամ ավելացված արժեքի հարկի գումար) լրացվել է սխալ:

Չեղարկված հաշվարկային փաստաթուղթը դրա կողմերի համար Օրենսգրքով սահմանված իրավական հետևանքներ, այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ, չի առաջացնում:».

5) 11-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ մաս.

«11.1. Այն գործարքի մասով, որի կատարման օրը ներառող հարկային տարվանից անցել է երեք հարկային տարի, հաշվարկային փաստաթուղթ (այդ թվում՝ ճշգրտող) չի կարող դուրս գրվել:».

6) 12-րդ մասին հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մաս.

«13. Ճշգրտման ենթակա գործարքի մասով դուրս է գրվում ճշգրտող հարկային հաշիվ կամ ճշգրտող հաշիվ վավերագիր:»:

Հոդված 28. Օրենսգրքի 57-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից հանրային ծառայությունների ենթակառուցվածքները շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով տեղափոխվող ապրանքների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված ոլորտներում

գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից տեղափոխվող հիմնական միջոցների, ինչպես նաև» բառերը.

2) 2-րդ մասի «բ» կետում «տարանջման հայտարարագրով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ցանցային կապի միջոցներով ապրանքների հետագծելիությունն ապահովող և հարկային մարմին տեղեկատվություն հաղորդող էլեկտրոնային սարքերով (այսուհետ՝ ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարք)» բառերը.

3) 3-րդ մասի 2-րդ կետում «առաքման» բառը փոխարինել «մատակարարման» բառով.

4) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված այն ապրանքները, որոնք Օրենսգրքի 358.1-րդ հոդվածով սահմանված դեպքում փաստացի մատակարարվում կամ տեղափոխվում են առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի:»:

Հոդված 29. Օրենսգրքի 59-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին պարբերության «սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով» բառերը փոխարինել «սույն հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով» բառերով.

բ. 4-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Եթե հարկ վճարողը, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, դադարել է համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հայտարարությունում նշված օրը և եթե հարկ վճարողը որպես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, ապա ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում):».

2) 2-րդ մասի առաջին պարբերությունից հանել «բացառապես» բառը.

3) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1 Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող

կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ԱԱՀ վճարողներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

3) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:»

4) 5-րդ մասում՝

ա. «ԱԱՀ-ի գումարները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը մինչև Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամը գերազանցելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքներ իրականացնելու դեպքում (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման գործարքների), ինչպես նաև Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում այդ գործարքներից Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում ԱԱՀ հաշվարկելու և պետական բյուջե վճարելու պարտավորություն չեն կրում:»:

Հոդված 30. Օրենսգրքի 60-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայության մատուցման գործարքը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում, եթե այն սկսվում և ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:»:

Հոդված 31. Օրենսգրքի 62-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասից հանել «՝ անկախ ապրանքի մատակարարման պայմանագրով տարայի վերադարձ նախատեսված լինելու հանգամանքից» բառերը:

2) 4-րդ մասի 2-րդ կետի 2-րդ պարբերության «բ» ենթակետում «ակցիզային հարկի գումարը» բառերից հետո լրացնել «եթե այդ գումարը չի ներառվել վերամշակման արդյունք հանդիսացող ներմուծվող ապրանքի հաշվեկշռային արժեքում» բառերը.

3) 6-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի 2-րդ պարբերությանում «օրն ընդգրկող հարկային տարվան նախորդող հարկային տարվա սկզբից մինչև համապատասխան գործարքի կատարումը» բառերը փոխարինել «օրվան նախորդող 365 օրվա ընթացքում» բառերով.

4) 7-րդ մասից հանել «էական» բառը.

5) 9-րդ մասի 2-րդ պարբերությանում «սահմանված հարկման բազայի» բառերը փոխարինել «որոշված հարկման բազայի» բառերով:

Հոդված 32. Օրենսգրքի 63-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների» բառերով.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների գծով միայն ՀԴՄ կտրոն է տրամադրել գնորդին:»:

Հոդված 33. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«28. Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափանիշներին բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի՝ օտարումը.».

2) 36-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով (բացառությամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքերի) արտահանված ապրանքների մատակարարումը.».

3) 41-րդ կետում «իրերի» բառը փոխարինել «գույքի» բառով.

4) 47-րդ կետի՝

ա. 1-ին պարբերությունում «անձանց» բառը փոխարինել «հարկ վճարողների» բառերով.

բ. «ը» ենթակետում «ներդրումային ֆոնդի կառավարման» բառերից առաջ լրացնել «բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և այլ հարկ վճարողների կողմից» բառերով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 48 և 49-րդ կետեր.

«48) Օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.

49) ներդրումային ֆոնդի կողմից անշարժ գույքի օտարումը տվյալ ներդրումային ֆոնդում մասնակցություն ունեցող անձին, եթե անշարժ գույքը նախկինում ներդրումային ֆոնդի կողմից որպես ներդրումային ֆոնդում փայի կամ բաժնետոմսի դիմաց ներդրում ձեռք է բերվել տվյալ անձից:»

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 50 և 51-րդ կետեր.

50) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից այն օտարերկրյա ապրանքների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական

ա. 3-րդ սյունակում հանել «արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ» բառերը.

բ. 4-րդ սյունակում «55 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 550 դրամ» բառերը փոխարինել «1 լիտրի համար՝ 800 դրամ» բառերով.

2) ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ծածկագրերին վերաբերող տողում լրացնել նաև ԱՏԳ ԱԱ 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0 ծածկագրերը.

3) 3-րդ մասում «իրացման դեպքում» բառերը փոխարինել «օտարման դեպքում» բառերով:

Հոդված 41. Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ կետեր.

«6) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից ակցիզային հարկով հարկման ենթակա այն օտարերկրյա ապրանքների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

7) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծումը:»:

Հոդված 42. Օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ՝

«5) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը:»:

Հոդված 43. Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «այսուհետ սույն բաժնում՝» բառերը փոխարինել «այսուհետ՝» բառով:

Հոդված 44. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ ենթակետում «հաշվեգրվող տույժերը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով շահութահարկ վճարողին (հարկային գործակալին) վերադարձվող (փոխհատուցվող)՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները» բառերը:

Հոդված 45. Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով՝

1) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի (այսուհետ սույն մասում՝ շենք) օտարումից եկամուտը հաշվարկվում է դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից (այսուհետ սույն մասում՝ կադաստրային արժեք) ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ԱԱՀ-ի) դեպքում կադաստրային արժեքի և փաստացի հատուցման գումարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, գործարքի կատարման օրը ներառվում է նոր սեփականատիրոջ եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարողը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում նոր սեփականատիրոջ մոտ ներված պարտավորություն չի առաջանում: Ընդ որում՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) կադաստրային արժեքից ցածր գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) օտարելու դեպքում՝

ա. օտարող ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի չափով, որից նվազեցվում է օտարման օրն ընդգրկող ամսվա 1-ի դրությամբ տվյալ շենքի հաշվեկշռային արժեքը, ինչպես նաև ռեզիդենտի մոտ այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը,

բ. գնորդ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ շենքի սկզբնական արժեքը որոշվում է կադաստրային արժեքով, իսկ շենքի կադաստրային արժեքի և փաստացի ձեռքբերման գնի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը որպես ներված պարտավորություն ներառվում է համախառն եկամտի մեջ.

2) շենքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է դրանց կադաստրային արժեքի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալու-

թյան կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող կադաստրային արժեքի 2.5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ԱԱՀ-ի) դեպքում կադաստրային արժեքի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի 2.5 տոկոսի և փաստացի վարձակալական վճարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված պահին ներառվում է վարձակալի կամ փոխառուի եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձատուն կամ փոխատուն հանդիսանում է անհատ ձեռնարկատեր և նուտար չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում վարձակալի կամ փոխառուի մոտ ներված պարտավորություն չի առաջանում: Ընդ որում՝

ա. ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին կադաստրային արժեքի 2.5 տոկոսից (տարեկան կամ տարեկանի վերածած) ցածր գումարով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) վարձակալության հանձնման դեպքում՝

- վարձատու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը) և շահութահարկով հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են շենքի ամորտիզացիոն մասհանումները (կարճաժամկետ կամ գործառնական վարձակալության դեպքում), ինչպես նաև ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը,

- վարձակալ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ վարձակալության հետ կապված ծախսերը հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը) և շենքի վրա կատարված

ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով, իսկ շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսի (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը) և փաստացի վարձավճարի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը որպես ներված պարտավորություն ներառվում է համախառն եկամտի մեջ:

բ. ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին անհատույց օգտագործման հանձնելու դեպքում՝

- փոխատու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը) և շահութահարկով հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են շենքի ամորտիզացիոն մասհանումները, ինչպես նաև ռեզիդենտի մոտ այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը,

- փոխառու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ վարձավճարները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը) և շենքի վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով, իսկ շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսը (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը) որպես ներված պարտավորություն ներառվում է համախառն եկամտի մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված եկամտի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի՝ հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ:

3) ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին կադաստրային արժեքի 2.5 տոկոսից (տարեկան կամ տարեկանի վերաճած) ոչ պակաս գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) վարձակալության հանձնման դեպքում հարկերը հաշվարկվում են և ակտիվները ու պարտավորությունները հաշվառվում են՝ հիմք ընդունելով գործարքի փաստացի գինը:

Սույն մասի դրույթները չեն կիրառվում, եթե սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):»:

2) 3-րդ մասի 5-րդ կետից հանել «, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա հունիսի 30-ը ներառյալ» բառերը.

3) 4-րդ մասի՝

ա. 9-րդ կետում «335-րդ» բառը փոխարինել «327-րդ» բառով,

բ. 11-րդ կետի «ա» ենթակետում «անհուսալի» բառը փոխարինել «հարկման նպատակով դուրս գրման ենթակա» բառերով.

գ. 11-րդ կետի «թ» ենթակետի «առաջացման» բառը փոխարինել «կետանցված դառնալու օրվան» բառերով:

Հոդված 46. Օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասում «10-12-րդ մասերով» բառերը փոխարինել «11-13-րդ մասերով» բառերով:

Հոդված 47. Օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասում, 121-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում, 150-րդ հոդվածի 13-րդ մասում, 258-րդ հոդվածի 2-րդ մասում «1-4-րդ կետերով» բառերը փոխարինել «1-5-րդ կետերով» բառերով:

Հոդված 48. Օրենսգրքի 120-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող յուրաքանչյուր ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման գործարքներին վերաբերող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ

սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի այն մասը, որը ամսական կտրվածքով գերազանցում է երեք միլիոն դրամը:»:

Հոդված 49. Օրենսգրքի 121-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«7) Մինչև հանքի շահագործման սկիզբը կատարված մակաբացման աշխատանքների գծով ճանաչված ակտիվները ամորտիզացվում են հաստատված օգտակար հանածոյի ընդհանուր պաշարի արդյունահանմանը համամասնորեն՝ ներառվելով արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքում: Հանքի շահագործումը սկսելուց հետո կատարված մակաբացման աշխատանքների գծով ծախսերը վերագրվում են մակաբացման աշխատանքների արդյունքում արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին: Մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրելու կարգը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից:»:

Հոդված 50. Օրենսգրքի 125-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասի կիրառության իմաստով՝

1) այն հարկ վճարողը, որը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

ա. որևէ օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում,

բ. որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում.

2) եթե նոր հաշվառված անհատ ձեռնարկատերը կամ նոտարը մինչև հաշվառման օրվան հաջորդող օրվա ավարտը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

ա. հաշվառման օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա այդ օրվանից մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում,

բ. հաշվառման օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա այդ օրվանից մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում:»:

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների ձեռքբերման համար այդ երկրներում (տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպությանը կատարված կանխավճարների դիմաց արդյունքը կանխավճարի կատարման օրվան հաջորդող 365 օրվա ընթացքում չստացվելու դեպքում կատարված կանխավճարը դրա կատարման օրվան հաջորդող 366-րդ օրը այդ կազմակերպության համար համարվում է Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող այլ եկամուտ, որի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված դրույքաչափով:»:

Հոդված 51. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «արտադրանք են համարվում» բառերից հետո լրացնել «հարկ վճարողի կողմից իրականացված գործողությունների արդյունքում» բառերը:

2) 1-ին կետի «զ» ենթակետում «բազմամյա տնկիների» բառերը փոխարինել «պտղատու այգիների, հատապտղանոցների» բառերով:

Հոդված 52. Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «բացառությամբ տրված փոխառության դիմաց ոչ ռեզիդենտ կազմակերպություններից կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ստացվող տոկոսային եկամտի» բառերը փոխարինել «բացառությամբ տրված փոխառության կամ ներդրված ավանդի կամ բանկային հաշվի մնացորդի դիմաց ստացվող տոկոսային եկամտի» բառերով:

Հոդված 53. Օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «կատարված» բառը փոխարինել «հաշվարկված» բառով:

Հոդված 54. Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետից հանել «կամ նույն կետով սահմանված ժամկետի լրանալը» բառերը:

Հոդված 55. Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասում և 315-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվառման վայրի հարկային մարմին» բառերը փոխարինել «հարկային մարմին՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը սպասարկող ստորաբաժանում» բառերով:

Հոդված 56. Օրենսգրքի 135-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մաս.

«2.1 Նախորդ հարկային տարվա համար ներկայացված շահութահարկի (այդ թվում՝ ճշտված) հաշվարկը հիմք է հանդիսանում այդ հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող առաջիկա կանխավճարի մեծության հաշվարկման համար, եթե հաշվարկը ներկայացվել է մինչև տվյալ հարկային տարվա վերջին կանխավճարի կատարման վերջնաժամկետը:».

2) 6-րդ մասում «61-րդ հոդվածի» բառերը փոխարինել «59-րդ հոդվածի» բառերով:

Հոդված 57. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ, 65-րդ և 66-րդ հոդվածների համաձայն՝ զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց համար կատարվող աշխատանքները, նրանց մատուցվող ծառայությունները կամ նրանց՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացվող եկամուտները, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների (ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների) ստացվող դրամական ապահովությունը.».

2) 16-րդ կետի՝

ա. «ա.» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույք (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող, ավտոտնակ, ավտոմեքենա) նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում»,

բ. «դ» ենթակետերից հանել «անձնական օգտագործման» բառերը:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 37-րդ կետով՝

«37) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա շահառուներին վճարվող հատուցման գումարները:»:

Հոդված 58. Օրենսգրքի 150-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասում «հաշվարկվում է լրացուցիչ» բառերը փոխարինել «ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ» բառերով.

2) 10-րդ մասի 1-ին կետի «տասը» բառը փոխել «քսան» բառով.

3) 12-րդ մասում «կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում» բառերից հետո լրացնել «կամ պայմանագրային ներդրումային ֆոնդում» բառերը.

4) 13-րդ մասում երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով սահմանված չափով եկամտային հարկ չի հաշվարկվում, եթե Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերի բացակայության պայմաններում վճարվող եկամուտների մասով առկա են հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված՝ վճարվող եկամուտները հիմնավորող այլ փաստաթղթեր, որտեղ նշված են ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը:»:

Հոդված 59. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասում « նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ» բառերը փոխարինել « ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում

բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների» բառերով:

Հոդված 60. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասում «ներդրված գումարը» բառերից հետո լրացնել «՝ ներդրման չափով» բառերը:

Հոդված 61. Օրենսգրքի 160-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 160. Վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձը

1. Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռքբերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռք բերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելուն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով վերադարձման ենթակա եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց չի վերադարձվում, եթե բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռք բերման գործարքի պայմանագրային արժեքը գերազանցում է 55 միլիոն դրամը,

2) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռքբերելուն կամ անհատական բնակելի տան կառուցմանը փաստացի ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով հիպոտեկային վարկի վարկառուին և առկայության դեպքում համավարկառուներին վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար չի կարող գերազանցել 1.5 միլիոն դրամը,

3) հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո վարկառու և համավարկառու ֆիզիկական անձինք իրենց ընտրությամբ կարող են օգտվել միայն մեկ հիպոտեկային վարկի պայմանագրի մասով:

3. Սույն հոդվածով սահմանված գումարները՝

1) վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման եռամսյակային պարբերականությամբ.

2) հարկային գործակալի միջոցով հարկային պարտավորությունները կատարող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման, եթե հարկային գործակալը ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը.

3) հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման, եթե վարձու աշխատողն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի պարզեցված հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը:

4. Սույն հոդվածով սահմանված գումարներից վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց վերադարձման ենթակա գումարների առավելագույն չափերը որոշելիս հարկային տարվա եռամսյակները դիտարկվում են առանձին-առանձին:

5. Եթե սույն հոդվածով սահմանված գումարները վերադարձնելուց հետո հարկային մարմին է ներկայացվում եկամտային հարկի ճշտված (պարզեցված) հաշվարկ կամ ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման հիման վրա փոխվում է հարկային մարմին ներկայացված հաշվարկով տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը, որի արդյունքում՝

1) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից՝ տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունը նվազում է ֆիզիկական անձին վերադարձված եկամտային հարկի գումարից, ապա փաստացի վերադարձված եկամտային հարկի գումարի և եկամտային հարկի գծով ճշտված

հարկային պարտավորության տարբերության չափով եկամտային հարկի վերադարձման օրվա դրությամբ հարկային գործակալին կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին առաջադրվում է եկամտային հարկի գծով պարտավորություն.

2) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից՝ տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով, կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունն ավելանում է, ապա կատարվում է վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող գումարի վերահաշվարկ:

6. Սույն հոդվածով սահմանված՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Սույն հոդվածի կիրառության նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը վարում է կառուցված և կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, անհատական բնակելի տների ռեեստրը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղեկություններ է տրամադրում հարկային մարմինն:»:

Հոդված 62. Օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում, 180-րդ հոդվածում, «բնապահպանական տեսչություն» բառերը փոխարինել «բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին» բառերով:

Հոդված 63. Օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասում «և դրանց» բառերից հետո լրացնել «կամ ընդերքօգտագործման թափոնների» բառերը:

Հոդված 64. Օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ օրենքներով սահմանված կարգով վարչարարության և ստուգման իրավասություն ունեցող ստորաբաժանում.»,

2) 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 65. Օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝

1) «ա» ենթակետի աղյուսակում բենտոնիտ օգտակար հանածոյին վերաբերող տողի 2-րդ սյունակում «6» բառը փոխարինել «4» բառով.

2) «բ» ենթակետի աղյուսակում բենտոնիտ օգտակար հանածոյին վերաբերող տողի 3-րդ սյունակում «2500» բառը փոխարինել «1650» բառով.

Հոդված 66. Օրենսգրքի 219-րդ հոդվածի 4-րդ մասում «բնապահպանական տեսչությունն» բառերը փոխարինել «բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 67. Օրենսգրքի 220-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բնօգտագործման վճար վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան, կազմում և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին են ներկայացնում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները:»,

2) 2-րդ մասում «ընդերքի պետական տեսչություն, բնապահպանական տեսչություն» բառերը փոխարինել «բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին» բառերով:

Հոդված 68. Օրենսգրքի 236-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից» բառերը.

2) 3-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից» բառերը.

3) 4-րդ մասում «Անշարժ գույքի կադաստր վարող» բառերից առաջ լրացնել «Բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից,» բառերը:

Հոդված 69. Օրենսգրքի 251-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ եթե օտարումը կատարվել է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից» բառերը.

2) 5-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվել է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից» բառերը.

3) 5-րդ մասում «տվյալ համայնքում հաշվառված՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բոլոր օբյեկտների» բառերը փոխարինել «փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ փոխադրամիջոցի» բառերով:

4) 6-րդ մասում «Շարժական գույքի կադաստր վարող» բառերից առաջ լրացնել «Բացառությամբ հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից կատարված օտարման դեպքերի,» բառերը:

Հոդված 70. Օրենսգրքի 254-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 6-րդ կետում և Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում «իրացման շրջանառության և այլ եկամուտների հանրագումարների ամբողջությունը» բառերը փոխարինել «իրացման շրջանառությունների հանրագումարը» բառերով:

2) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով կարող է համարվել շրջանառության հարկ վճարող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում: Սույն մասով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում համարվում է շրջանառության հարկ վճարող անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումների, բացառությամբ այն դեպքերի, երբ շրջանառության հարկ վճարող համարվող հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում համարվում է շրջանառության հարկ վճարող անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումների, բացառությամբ այն դեպքերի, երբ շրջանառության հարկ վճարող համարվող հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն: Սույն բաժնի կիրառության իմաստով հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը: Այդ գործունեությունը ներառում է նաև խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ծառայությունները, մասնավորապես սպասարկումը, մուտքի թույլտվությունը:»:

Հոդված 71. Օրենսգրքի 258-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. «հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները» բառերը փոխարինել «հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները» բառերով.

բ. աղյուսակի 1-ին և 5-րդ տողերից հանել «և ավտոտրանսպորտային միջոցների» բառերը.

գ. աղյուսակի «Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտներ» տողից հետո լրացնել նոր տողեր հետևյալ բովանդակությամբ՝

« Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	8	
Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացվող շրջանառության հարկ վճարողների կողմից խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ	20	»

ե. աղյուսակի 8-րդ տողի «8» բառը փոխարինել «10» բառով.

զ. աղյուսակի վերջին տողում «Այլ գործունեությունից» բառերից հետո լրացնել «կամ այլ ակտիվների օտարումից» բառերը.

2) 2-րդ մասում «ներմուծման մաքսային հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի, հաշվարկված մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկերի հանրագումարի կամ ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկման բազայի, հաշվարկված ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի հանրագումարի» բառերը փոխարինել «ներմուծման մաքսային հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի, հաշվարկված մաքսատուրքի, ԱԱՀ-ի և (կամ) բնապահպանական հարկերի հանրագումարի կամ ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկման բազայի, հաշվարկված ԱԱՀ-ի և (կամ) բնապահպանական հարկի հանրագումարի» բառերով:

3) լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն

հողվածի 11-13-րդ մասերով սահմանված հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցների ձեռքբերման կամ կառուցման ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում դրանց ձեռքբերման ծախսերի) հանրագումարի հինգ տոկոսը: Եթե սույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսը: Սույն մասի կիրառության իմաստով ծախսերի մեջ ներառվում են նաև ձեռքբերվող կամ ներմուծվող ապրանքների համար վճարվող մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները:»:

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցների ձեռքբերման կամ կառուցման ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում դրանց ձեռքբերման ծախսերի) հանրագումարի վեց տոկոսը: Եթե սույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսը: Սույն մասի կիրառության իմաստով ծախսերի մեջ ներառվում են նաև ձեռքբերվող կամ ներմուծվող ապրանքների համար վճարվող մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները:»:

Հոդված 72. Օրենսգրքի 260-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 260. Պետական բյուջե վճարման ենթակա շրջանառության հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի գործունեության (բացառությամբ առևտրական (առք ու վաճառքի) և հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության) արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան դրույքաչափերի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարը:

2. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեության (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեության) արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարի և Օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարից նվազեցվող գումարի տարբերությունը:

3. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարի և Օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարից նվազեցվող գումարի տարբերությունը:

4. Առևտրական (առք ու վաճառքի) կամ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով շրջանառության հարկի հաշվարկման նպատակով իրականացվում է ապրանքների առանձնացված հաշվառում:»:

Հոդված 73. Օրենսգրքի 264-րդ հոդվածում հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում Օրենսգրքի 258-դ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ապրանքներ ձեռք բերելու ծախսերի գծով չնվազեցված մասի 25-ապատիկը նվազեցվում է շրջանառության հարկի

համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համախառն եկամտից»:

Հոդված 74. Օրենսգրքի 267-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «գործունեությունն» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ արտոնագրային հարկի օբյեկտ համարվող գործունեությունը)» բառերը.

2) 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ՝

«9) հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը.»:

Հոդված 75. Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «հայտարարության ներկայացման օրվանից» բառերը փոխարինել «հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ)» բառերով.

2) 3-րդ կետում «6-րդ կամ 8-րդ» բառերը փոխարինել «6-րդ, 8-րդ կամ 9-րդ» բառերով:

Հոդված 76. Օրենսգրքի 270-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) Օրենսգրքի 180-րդ հոդվածքով սահմանված՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի»:

Հոդված 77. Օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասը, 276-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 2-րդ մասի 1-ին կետը և 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերը, 277-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին տողը, 278-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասը, 279-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 416-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի 2-րդ կետերը և 7-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 78. Օրենսգրքի 275-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերում «հարկային մարմին են ներկայացնում» բառերից առաջ լրացնել «Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը.

2) 3-րդ մասում «հարկային մարմին է ներկայացվում» բառերից առաջ լրացնել «Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը.

3) 4-րդ մասից հանել «, եթե մինչև արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունում նշված հաշվետու ժամանակաշրջանի սկզբի օրվան նախորդող օրը ներառյալ կատարվել է սույն գլխով սահմանված կարգով և չափով հաշվարկված արտոնագրային

հարկի վճարում, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքի» բառերը և երկրորդ պարբերությունը.

4) 5-րդ մասից հանել «, եթե մինչև նոր հայտարարությունում նշված հաշվետու ժամանակաշրջանի սկզբի օրվան նախորդող օրը ներառյալ կատարվել է ավելացված ելակետային տվյալների մասով սույն գլխով սահմանված կարգով և չափով հաշվարկված արտոնագրային հարկի վճարում, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքի» բառերը և երկրորդ պարբերությունը.

5) 6-րդ մասից հանել «թղթային կամ» բառերը.

6) 7-րդ մասից հանել «՝ առանց արտոնագրային հարկի վճարման» բառերը:

Հոդված 79. Օրենսգրքի 275-րդ հոդվածի 7-րդ, 420-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ, 421-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «Սահմանամերձ համայնքներում» բառերը փոխարինել «Սահմանամերձ բնակավայրերում» բառերով, իսկ օրենսգրքի 410-րդ հոդվածի 5-րդ մասում «սահմանամերձ համայնքներում» բառերը փոխարինել «սահմանամերձ բնակավայրերում» բառերով:

Հոդված 80. Օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «100մ²» բառերը փոխարինել «600մ²» բառերով:

Հոդված 81. Օրենսգրքի 277-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակում «Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն	տարածք, մինչև 20մ ² ներառյալ	30000 դրամ	21000 դրամ	21000 դրամ	5250 դրամ	10500 դրամ
	տարածք, 20-ից մինչև 50 մ ² ներառյալ	30000 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000 դրամ	21000 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500 դրամ	21000 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500 դրամ	5250 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 2625 դրամ	10500 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 5250 դրամ
	տարածք, 50 մ ² ավելի՝ մինչև 300 մ ² ներառյալ	75000 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 21000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	13125 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 7500	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000
	տարածք, 300 մ ² ավելի՝ մինչև 500 մ ² ներառյալ	600000 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 12000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	200625 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 4000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000

	տարածք, 500 մ² մակերեսից ավելի	840000 գումարած 500 մ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ² համար՝ 6000	587500 գումարած 500 մ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ² համար՝ 3500	587500 գումարած 500 մ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ² համար՝ 3500	280625 գումարած 500 մ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ² համար՝ 1750	587500 գումարած 500 մ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ² համար՝ 3500
--	--------------------------------------	---	--	--	--	--

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնագրային հարկի ամսական դրույքաչափի կիրառման համար հիմք են ընդունվում «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բնակավայրերը, բացառությամբ սահմանամերձ գյուղերի, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 82. Օրենսգրքի 280-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերում «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

2) 3-րդ մասում «հանրային սննդի ոլորտում իրականացվող,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

3) 1-ին և 2-րդ մասերից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության,» բառերը,

4) 3-րդ մասից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող,» բառերը:

Հոդված 83. Օրենսգրքի 282-րդ հոդվածի՝

1) 2-րդ և 5-րդ մասերում «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

2) 4-րդ մասում «հանրային սննդի ոլորտում իրականացվող,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

3) 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության,» բառերը.

4) 4-րդ մասից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող» բառերը:

Հոդված 84. Օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ից մասում «եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ» բառերից հետո լրացնել «դրանք նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմնի հետ» բառերը:

Հոդված 85. Օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, իսկ արտոնագրային հարկի պարտավորությունը հաշվառվում է արտոնագրային հարկով հարկվող գործունեության իրականացման ժամանակահատվածի սկզբի ամսաթվով» բառերը:

Հոդված 86. Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել, իսկ 2-րդ կետում «պետական» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետից ստացվել է գրավոր հանձնարարական, իսկ» բառերը:

Հոդված 87. Օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում լրացնել հետևյալ նոր պարբերություն.

«Ընդ որում, հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը վերստուգում անցկացնելու որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, երբ հարկային ստուգում իրականացրած անձանց գործողությունների դեմ բերված բողոքը հնարավոր է բավարարել միայն վերստուգման դեպքում և եթե վերստուգում իրականացնելու մասին հարկ վճարողը հայտնել է իր գրավոր համաձայնությունը: Վերստուգում իրականացնելու մասին հարկ վճարողի կողմից գրավոր համաձայնություն չհայտնելու դեպքում հարկային ստուգում իրականացրած անձանց գործողությունների դեմ բերված բողոքը այդ մասով մերժվում է:»:

Հոդված 88. Օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) հարկային մարմնի մոնիտորինգային համակարգի միջոցով իրականացվող վերլուծության արդյունքները:»:

Հոդված 89. Օրենսգրքի 346-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) հարկային մարմնի մոնիտորինգային համակարգի միջոցով իրականացվող վերլուծության արդյունքները.»:

Հոդված 90. Օրենսգրքի 358-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 358.1-րդ հոդված.

Հոդված 358.1. Ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերի կիրառումը

1. ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների տեղաշարժի նկատմամբ հսկողության

իրականացման համար կիրառվում են ապրանքների հետազօծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքեր:

2. Ապրանքների հետազօծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերը կիրառվում են այն դեպքում, երբ ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքի ձեռքբերման գինը (արժեքը)՝ ըստ հաշվարկային փաստաթղթերի հանրագումարի, գերազանցում է 10 միլիոն դրամը:

3. Հարկային մարմինը սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ ապրանքների հետազօծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերը հարկ վճարողներին տրամադրում է անվճար՝ վերադարձման պայմանով: Ապրանքների հետազօծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերի տրամադրման և վերադարձման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 91. Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք):»:

Հոդված 92. Օրենսգրքի 363-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ռեզիդենտ հարկ վճարողի և հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված հարկ վճարողների միջև իրականացվող գործարքը՝ անկախ այդ հարկ վճարողների փոխկապակցվածության հանգամանքից, համարվում է վերահսկվող:»:

Հոդված 93. Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերում «գյուղատնտեսական արտադրանքի» բառերից առաջ լրացնել «Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերը:

Հոդված 94. Օրենսգրքի 380-րդ հոդվածի՝

1) 1-ին և 3-րդ մասերում, 381-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերում, 384-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 416-րդ հոդվածի 1-ին մասում «կանխիկ դրամով» բառերից հետո լրացնել «կամ պլաստիկ քարտերի միջոցով» բառերը.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետ.

«12) կրպակներում թերթերի և ամսագրերի իրացումը, եթե թերթերի և ամսագրերի իրացման շրջանառության տեսակարար կշիռը գերազանցում է ամբողջ իրացման շրջանառության 50 տոկոսը: Թերթերի և ամսագրերի իրացման շրջանառության հաշվառումն իրականացվում է առանձնացված կարգով:»:

Հոդված 95. Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>), իսկ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը կազմակերպության ներկայացուցչին, անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա ներկայացուցչին, նոտարին կամ նրա ներկայացուցչին տրամադրելու դեպքում՝ նաև համապատասխանաբար ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>).»:

Հոդված 96. Օրենսգրքի 386-րդ հոդվածի 4-րդ մասում «գբաղվողներից» բառը փոխարինել «գբաղվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից» բառերով:

Հոդված 97. Օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «կազմակերպությունների» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատերերի» բառերը:

Հոդված 98. Օրենսգրքի 388-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «կազմակերպության» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերը.

2) 4-րդ մասում «կազմակերպության» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերը, իսկ «կազմակերպությունների» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատերերի» բառերը:

Հոդված 99. Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 010511 ծածկագրի տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

0207	ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ 0105 ապրանքային դիրքում դասակարգված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	միս
------	--	-----

2) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 010511 ծածկագրի տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

0209	անյուղ մսից առանձնացված չհալեցրած կամ այլ եղանակով չստացած ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած	միս
0210	ընտանի թռչունների միս և մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած. մսից կամ մսի սննդային ենթամթերքից ստացված մանր և խոշոր աղացվածքի ալյուր	միս

3) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 3210 00 ծածկագրի տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

3211 00	պատրաստի չորարարներ	չորարարներ
3212	գունանյութեր (ներառյալ մետաղական փոշիներ և փաթիլներ)՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված, հեղուկ կամ մածուկանման, որոնք օգտագործվում են ներկերի արտադրության մեջ (ներառյալ արծնները), փայլաթիթեղ դրոշմատպման համար, ներկանյութեր և ներկող այլ նյութեր՝ բաժնեծրարված կամ փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	գունանյութեր

4) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 3303 00 ծածկագրի տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3303 00	օծանելիք, հարդաջուր	օծանելիք
---------	---------------------	----------

5) աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

3403 19 100 0 3403 19	քսայուղեր, այլ յուղեր	նավթավերամշակման արտադրանք
-----------------------------	-----------------------	----------------------------

900 0		
3403 99		
000 0		

Հոդված 100. Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և «Անմաքս առևտուր»» բառերը, իսկ «ընթացակարգերով» բառը փոխարինել «ընթացակարգով» բառով:

Հոդված 101. Օրենսգրքի 392-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «, բացառությամբ «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով արտահանվող ապրանքների» բառերը:

Հոդված 102. Օրենսգրքի 393-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերը փոխարինել «Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ներմուծվող» բառերով, իսկ «իսկ» բառից հետո լրացնել «Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտադրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերը, ինչպես նաև» բառերը,

2) 5-րդ մասի 3-րդ կետի «2208» բառից հետո բառից հետո հանել «, 2402» բառը:

Հոդված 103. Օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասում «կողմից» բառից հետո լրացնել «հարկային մարմնի սահմանած ձևի դիմումի հիման վրա» բառերը և նույն մասից հանել «՝ հարկ վճարողի դիմումի հիման վրա» բառերը:

Հոդված 104. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 396.1-րդ հոդվածով.

«Հոդված 396.1. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա ապրանքների դրոշմավորման կարգը

1. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում սահմանված լինելու դեպքում հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման պարտավորություն կրող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ կիրառվում են դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար Օրենսգրքով, այլ

օրենքներով և դրոշմապիտակների համակարգի կիրառությունն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները:

Հոդված 105. Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց դեպքում սույն մասով սահմանված տուգանքի կիրառության իմաստով, յուրաքանչյուր 15 լրացած օրվա հաշվարկը սկսվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարման ենթակա հարկային պարտավորության մեծությունն արտահայտող վարչական ակտի ամսաթվից:»:

Հոդված 106. Օրենսգրքի 403-րդ հոդվածի 3-րդ մասում «հարկային հաշվարկում» բառերը փոխարինել «շրջանառության հարկի հաշվարկում» բառերով:

Հոդված 107. Օրենսգրքի 404-րդ հոդվածից հանել «, իսկ յուրաքանչյուր հարկային տարվա շահութահարկի հաշվարկում հարկային վնասը (առանց հաշվի առնելու նախորդ հարկային տարիներից փոխանցվող հարկային վնասի մեծությունը) մեկ միլիոն դրամ և ավելի չափով ավել ցույց տալու համար գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով» բառերը:

Հոդված 108. Օրենսգրքի 410-րդ հոդվածի՝

1) 1-ին, 3-րդ և 5-րդ մասերում «առանց ուղեկցող փաստաթղթի» բառերից հետո հետո լրացնել «կամ առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի» բառերը,

2) 1-5-րդ մասերում «տեղափոխության փաստաթղթավորման» բառերից հետո լրացնել «կամ ապրանքների հետագծելիության ապահովման» բառերը,

3) 8-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության դեպքում սույն հոդվածով սահմանված տուգանքների կիրառության իմաստով ապրանքի գին (արժեք) է համարվում ապրանքի ձեռքբերման գինը:»:

Հոդված 109. Օրենսգրքի 416-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «կանոնների» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն հոդվածի 5.1-րդ մասում նշված դեպքի)» բառերը.

2) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մաս.

«5.1 ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած լինելու դեպքում կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից այդ ծրագրերի և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագրի միջամտության արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում տպագրված կամ փաստացի վաճառված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության անվանման, ապրանքային դիրքի, աշխատանքի կամ ծառայության կոդի, քանակի և (կամ) ծավալի վերաբերյալ տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն հարկային մարմին ուղարկելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է հինգ միլիոն դրամի չափով:»:

Հոդված 110. Օրենսգրքի 421-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելը համալիր կամ թեմատիկ հարկային ստուգմամբ հայտնաբերելու դեպքում, բացառությամբ սույն հոդված 2-րդ մասով սահմանված դեպքերի, կազմակերպությունից և (կամ) անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի համար Օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի գումարն ու կազմակերպությունը և (կամ) անհատ ձեռնարկատերը նախազգուշացվում է: Սույն մասով սահմանված խախտումը համալիր կամ թեմատիկ հարկային ստուգման ակտով արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության նույն տեսակի (տեսակների) մասով կրկին կատարելու դեպքում կազմակերպությունից և անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար՝ Օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի կրկնակի չափով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Սույն մասով սահմանված տուգանքի հաշվարկման համար Օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործակիցը հաշվի չի առնվում:»,

2) 4-րդ մասում «3-րդ մասի» բառերը փոխարինել «1-ին և 3-րդ մասերի» բառերով:

Հոդված 111. Օրենսգրքի 444-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասում բոլոր «հայտարարված շահաբաժինների վրա» բառերը փոխարինել «ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա» բառերով:

2) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժինները ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններին ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:»

Հոդված 112. Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 9-րդ և 10-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել,

2) 4-րդ կետում «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «հավաստագրի տրամադրման օրվանից 5 տարի ժամկետով» բառերով:

3) 5-րդ կետում «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «հավաստագրի տրամադրման օրվանից 5 տարի ժամկետով, ինչպես նաև բացառությամբ նույն օրենքի 8.2-րդ հոդվածով նախատեսված դրույթների, որոնք շարունակում են գործել 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում ստացված հիպոտեկային վարկերի մասով» բառերով:

Հոդված 113. Օրենսգրքի 446-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Օրենսգրքի 62-րդ, 109-րդ, 145-րդ և 147-րդ հոդվածների կիրառության նպատակով անշարժ գույքի հարկով հարկման բազա է համարվում շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների դեպքում «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, գույքահարկով հարկման բազա համարվող կադաստրային արժեքը, իսկ հողամասերի դեպքում՝ «Հողի հարկի մասին»

Հայաստանի Հանրապետության 2-րդ հոդվածի համաձայն, հողի հարկով հարկվող օբյեկտները:»:

Հոդված 114. Օրենսգրքի 449-րդ հոդվածում՝

1) Օրենսգրքի 449-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«3. 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ հարկային հաշիվներում առանձնացված և չհաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող կարգով:»:

Հոդված 115. Օրենսգրքի 450-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3. Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներմուծված և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ առկա դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների մասով ներմուծման ժամանակ վճարված ակցիզային հարկը՝ յուրաքանչյուր տոննայի հաշվով 22000 դրամի չափով համարվում է Օրենսգրքի 92-րդ հոդվածի իմաստով ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումար և ներառվում է 2018 թվականի հունվար ամսվա հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում՝ որպես Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված հումքի մասով հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումար և Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշիվ: Սույն մասի կիրառությունն ապահովվելու նպատակով, հարկ վճարողները պարտավոր են հաշվառել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ դիզելային վառելիքի ապրանքային մնացորդները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը՝ հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան, ներկայացնել հարկային մարմին մինչև 2018 թվականի հունվարի 20-ը ներառյալ:»:

Հոդված 116. Օրենսգրքի 451-րդ հոդվածի՝

1) 4-րդ և 5-րդ մասերում «հիմնական միջոցների» բառերից հետո լրացնել «և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով» բառերը.

2) 5-րդ մասի 1-ին կետում «տարբերությունները» բառից հետո լրացնել «՝ հաշվի առած նաև 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում համապատասխան հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը և օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները» բառերը:

3) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մաս.

«5.1. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված ծախսերը որպես կապիտալ կամ ընթացիկ բնույթի ծախսեր դասակարգելու և հաշվառելու նպատակով սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի դրույթները կիրառելի չեն:»:

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ վճարված և փաստացի շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները հաշվանցվում են 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկի կանխավճարների գումարները գերազանցող փաստացի շահութահարկի գումարներից:»:

Հոդված 117. Օրենսգրքի 456-րդ հոդվածի 8-րդ մասում «8-րդ» բառը փոխարինել «7-րդ» բառով:

Հոդված 118. Օրենսգրքի 457-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հարկային մարմին ցանցային կապի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ ուղարկող հսկիչ դրամարկղային մեքենաներ չկիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ շրջանառության հարկ վճարողների) մինչև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետը յուրաքանչյուր ամսվա առաջին հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով: Մինչև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետը շրջանառության հարկ

վճարողները յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ եռամսյակային տեղեկությունները ներառում են սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող շրջանառության հարկի հաշվարկում:»:

Հոդված 119. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 1-5-րդ մասերով նախատեսված դեպքերի:

1. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ կետը ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը:

2. Սույն օրենքի 26-րդ հոդված 1-ին կետի «բ.» ենթակետը, 28-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերը, 29-րդ հոդվածի 1-ին կետի «ա.» ենթակետը, 3-րդ կետը, 47-րդ հոդվածը, 70-րդ հոդվածի 2-րդ կետը, 71-րդ հոդվածի 1-ին կետի «ա.» և «գ.» ենթակետը և 3-րդ կետը, 72-րդ հոդվածը, 74-րդ հոդվածի 2-րդ կետը, 75-րդ հոդվածի 2-րդ կետը, 77-րդ հոդվածը, 82-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 83-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 90-րդ հոդվածը, 95-րդ հոդվածը և 108-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից: Մինչև սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «ա.» ենթակետի և 3-րդ մասի, 70-րդ հոդվածի 2-րդ կետի, 71-րդ հոդվածի 1-ին կետի «ա.» և «գ.» ենթակետի և 3-րդ կետի, 72-րդ հոդվածի, 74-րդ հոդվածի 2-րդ կետի, 75-րդ հոդվածի 2-րդ կետի, 77-րդ հոդվածի, 82-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, 83-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի ուժի մեջ մտնելը 2018 թվականի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև 2018 թվականի ավարտը շարունակում են համարվել ավելացված արժեքի հարկ վճարող: Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերերը 2018 թվականի ընթացքում արտոնագրային հարկ վճարում և արտոնագրային հարկ վճարող են համարվում մինչև 2018 թվականի հուլիսի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար: 2018 թվականի 2-րդ կիսամյակում ներառված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 281-րդ հոդվածի իմաստով որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը վճարված արտոնագրային հարկի գումարները մուտքագրվում են միասնական հաշիվ 2018 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում:

3. Սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի «ե.» ենթակետը և 4-րդ կետը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն օրենքի 61-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է՝

1) 2018 թվականի հունվարի 1-ից հետո կառուցապատողից (պետությունից կամ համայնքից) ձեռքբերված բնակարանների կամ բնակելի տների նկատմամբ,

2) անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի նկատմամբ.

5. Սույն օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ կետը, 112-րդ հոդվածի 1-ին կետը և 113-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

6. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մինչև 2017 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակաշրջաններին վերագրվող շահույթների մասով 2017 թվականի հունվարի 1-ից հետո ստացած շահաբաժինների գծով հաշվարկված (պահված) եկամտային հարկի գումարները համարվում են գերավճարներ՝ համապատասխան ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում:

7. Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն ապրանքները, որոնց համար մինչև 2018 թվականի հունվարի 1-ը օրենսդրությամբ սահմանված չի եղել դրոշապիտակներով դրոշմավորման իրավական պահանջ և որոնք անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող անձանց կողմից ձեռք են բերվել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը և նրանց մոտ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ որպես ապրանքային մնացորդ առկա են, անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից կարող են իրացվել առանց դրոշմապիտակներով դրոշմավորման՝ մինչև 2018 թվականի մարտի 31-ը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

3) 1-ին կետում «հարկային մարմինների» բառերը փոխարինել «հարկային մարմնի» բառերով.

4) 3-րդ կետից հանել «՝ անկախ նրանց գործունեության ոլորտից, տարածքային պատկանելիությունից» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

15) 10-րդ կետի «գ» և «դ» ենթակետերում «հարկվող» բառերից հետո լրացնել «կամ Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված» բառերը.

16) 15-րդ կետից հանել «գույքային իրավունքի հետ կապված» բառերը.

17) 20-րդ կետում՝

ա. «ստացվող ակտիվի գնի» բառերից հետո լրացնել «, իսկ կանոնադրական (բաժնե-հավաք) կապիտալ ներդրման դեպքում՝ կողմերի պայմանավորվածությամբ որոշված գնի, որը ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով» բառերը.

բ. «և (կամ) տեղակայման ծախսերի» բառերը փոխարինել «, տեղակայման ծախսերի և (կամ) ձեռքբերման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի» բառերով.

18) 24-րդ կետում «Օրենսգրքով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «Օրենսգրքի 108-րդ հոդվածում սահմանված եկամուտ չհամարվող տարրերի և սույն մասի 25-րդ կետի կիրառության իմաստով անձնական եկամուտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինների» բառերով.

19) 25-րդ կետի երկրորդ նախադասությունում «ֆիզիկական անձի» բառերից առաջ լրացնել «ռեզիդենտ» բառը.

20) 26-րդ կետում «24-րդ կետով սահմանված դեպքերի» բառերից հետո լրացնել «և սույն մասի 25-րդ կետի կիրառության իմաստով անձնական եկամուտ համարվող՝ անհատ ձեռ-

նարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինների» բառերը.

21) 27-րդ կետում «համախառն եկամուտ» բառերից հետո լրացնել «հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա» բառերը.

22) 28-րդ կետում «Օրենսգրքով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «Օրենսգրքի 112-րդ հոդվածում սահմանված ծախս չհամարվող տարրերի» բառերով.

23) 32-րդ կետում «բաժնեհավաք» բառից հետո լրացնել «կամ փայահավաք» բառերը, իսկ «որպես շահույթի բաշխում» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ միջանկյալ բաշխում)» բառերը.

24) 34-րդ կետում «40-րդ գլխում» բառերը փոխարինել «10-րդ բաժնում» բառերով.

25) 35-րդ կետում «անձի» բառից հետո լրացնել «կողմից» բառը.

26) 42-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«42) **ապրանքի տեղափոխություն**՝ հարկ վճարողի կողմից իր առաքման վայրերի և (կամ) առաքման կետերի միջև տեղափոխվող կամ պահատվության, հանձնարարության, պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով կամ վերամշակման հանձնվող կամ վերադարձվող կամ վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքների վերամշակման արդյունքում վերադարձվող կամ որևէ առաքման վայրից կամ առաքման կետից ձեռք բերված և տեղափոխվող (այդ թվում՝ փոխադրողի միջոցով) ապրանքի տեղաշարժ՝ առանց ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի՝ մեկ անձից մեկ այլ անձին փոխանցման.».

27) 50-րդ կետում «և (կամ) ակցիզային հարկի» բառերը փոխարինել «, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի» բառերով.

28) 63-րդ կետի «ե» ենթակետում «տեղեկությունների» բառից հետո լրացնել «՝ ~~այլ~~ ~~պետությունների հարկային և մաքսային~~ **այլ** մարմիններին ներկայացնելու դեպքերում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «համապատասխան» բառից հետո լրացնել «բաժիններում կամ» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «այսուհետ՝ նաև ԱԱՀ» բառերը փոխարինել «այսուհետ նաև՝ ԱԱՀ» բառերով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ.» ենթակետ.

«գ. կենսաթոշակային վճարը.»:

Հոդված 6. Օրենսգրքի 8-րդ հոդվածի՝

4) 2-րդ մասում «շահութահարկով» բառից հետո լրացնել «, իսկ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով՝ արտոնագրային հարկով» բառերը.

5) 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ **շահութահարկով և** ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով ~~և շահութահարկով~~, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների: ~~Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող մասով՝ կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով և շահութահարկով:~~»

2) արտոնագրային հարկի համակարգի շրջանակներում՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով, կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող արտոնագրային հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ **շահութահարկով և** ԱԱՀ-ին փոխարինող արտոնագրային հարկով ~~և շահութահարկով~~».

6) 3-րդ մասի 3-րդ կետում «հարկումից» բառից հետո լրացնել «, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների ~~և հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության~~» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7. Հարկի հաշվարկը կատարվում է հայկական դրամով:»:

Հոդված 8. Օրենսգրքի 15-րդ հոդվածի՝

4) վերնագրում «մեթոդները» բառից հետո լրացնել «և հաշվառման եղանակները» բառերը.

5) 3-րդ մասի 6-րդ կետում «հարկի հիմնական» բառից հետո լրացնել «դրույքաչափից տարբերակված» բառերը.

6) 3-րդ մասի 7-րդ կետում «չնշված» բառը փոխարինել «նշված» բառով:

Հոդված 9. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «արտահանման մաքսային հայտարարագրի» բառերից հետո լրացնել «գրանցման» բառը:

Հոդված 10. Օրենսգրքի 19-րդ հոդվածում՝

3) 4-րդ մասում «իրավունքից» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում Օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ԱԱՀ-ի գումարների (կամ դրանց մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու մասին գրավոր հայտարարության ներկայացման դեպքերի վրա:»:

Հոդված 11. Օրենսգրքի 27-րդ հոդվածի՝

6) 1-ին մասում «իրականացման ժամանակահատվածից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի» բառերը.

7) 1-ին մասի 8-րդ կետում «ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ» բառերից հետո լրացնել «ոչ ռեզիդենտ» բառերը.

8) 4-րդ մասի 1-ին կետում «ցանկացած» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետությունում գտնվող» բառերը.

9) 5-րդ մասի 1-ին կետում «իրավական» բառը փոխարինել «իրավաբանական» բառով.

10) 10-րդ մասի 1-ին կետի՝

ա. «ա» ենթակետում «տարածքում» բառից հետո լրացնել «ապրանքների մատակարարման,» բառերը.

բ. «գ» ենթակետում «ծեռքերում» բառից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետությունում ապրանքների ներմուծում» բառերը.

գ. «դ» ենթակետում «տարածքում» բառից հետո լրացնել «ապրանքների մատակարարում,» բառերը.

Հոդված 12. Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում «ունի» բառը փոխարինել «ունեն» բառով:

Հոդված 13. Օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետ.

«4.1) իրականացնել հարկ վճարողի գործարքների մոնիտորինգ, գործունեության այլ ոլորտային վերլուծություններ և դրանց արդյունքներով գնահատված ռիսկերի նվազեցման վերաբերյալ ծանուցագրերի միջոցով իրազեկել հարկ վճարողներին.»:

Հոդված 14. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի՝

3) 2-րդ կետում «տրանսպորտային միջոցը վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների, որոնց մատուցման վայրը որոշվում է սույն մասի 6-րդ կետով սահմանված կարգով» բառերը փոխարինել «շարժական գույքի վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների)» բառերով.

4) 4-րդ կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ե. շարժական գույքը (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների, որոնց մատուցման վայրը որոշվում է սույն մասի 6-րդ կետով սահմանված կարգով) վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայություններ):»:

Հոդված 15. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետից հանել «կամ ֆինանսական ակտիվի» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրենսգրքի կիրառության նպատակով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքը ճշգրտվում է հետևյալ դեպքերում.

6) գործարքի առարկան պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանք է.

7) գործարքի առարկան հանրային կամ կոմունալ ծառայություն է, և գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրով նախատեսված է, որ այդ ծառայությունների ծավալը հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո կարող է ճշգրտվել.

8) գործարքի առարկա համարվող ապրանքի քանակը, ծավալը և (կամ) որակական հատկանիշները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, ստուգվում են գնորդի կողմից ապրանքի ընդունման պահին, և պարզվում է, որ դրանցից որևէ մեկը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պայմաններին, որի հետևանքով ապրանքը (կամ դրա մի մասը) ենթակա է մասնակի ընդունման կամ վերադարձման.

9) գործարքի առարկա համարվող ապրանքները մատակարարվել են ավել, քան սահմանված է եղել ~~պայմանագրով~~ **հաշվարկային** **ակարարվե**, և գնորդի կողմից ավել մատակարարված ապրանքներն ընդունվել են.

10) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման այն գործարքների դեպքում, երբ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների ծավալը գործարքի ավարտին ավել կամ պակաս է սկզբնապես դուրս գրված համապատասխան հաշվարկային փաստաթղթով նախատեսված ծավալից, **բացառությամբ այն դեպքերի, երբ՝**

ա. աշխատանքները կամ ծառայությունները արդեն իսկ (փաստացի) կատարվել կամ մատուցվել են գործարքի իրական պայմաններին համապատասխանող՝ դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշված պայմաններով,

բ. աշխատանքի կամ ծառայության բովանդակությունն այնպիսին է, որ աշխատանքի կամ ծառայության արդյունքի հետ հանձնումը հնարավոր չէ:

Դուրս գրված այն հարկային հաշվի կամ հաշիվ վավերագրի մասով, որի դուրսգրման օրը ներառող հարկային տարվանից անցել է երեք հարկային տարի, չի կարող դուրս գրվել համապատասխանաբար ճշգրտող հարկային հաշիվ կամ ճշգրտող հաշիվ վավերագիր:»:

Հոդված 17. Օրենսգրքի 44-րդ հոդվածի՝

7) 2-րդ մասում առաջին «տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու» բառերը փոխարինել «դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու» բառերով.

8) 2-րդ մասում՝

ա. «երրորդ հարկային տարին լրանալուց հետո» բառերից հետո լրացնել «, (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի)» բառերը.

9) 5-րդ մասում՝

ա. «պարտավորությունները» բառից հետո լրացնել «կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարները» բառերը.

բ. «անցել է երեք տարի» բառերից հետո լրացնել «, եթե այլ բան նախատեսված չէ սույն մասով» բառերը.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն մասով սահմանված ժամկետի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի միջև ընկած ժամանակահատվածում հարկ վճարողի կողմից կարող է ներկայացվել սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետում ներառված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները նվազեցնող կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարները ավելացնող հարկային հաշվարկ, որը հարկային մարմնի կողմից կարող է ստուգվել այդ հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում:».

10) 6-րդ մասի 1-ին նախադասությունում «հարկային մարմնի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով.

11) 6-րդ մասի 3-րդ նախադասությունում «ճշտում» բառը փոխարինել «կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների փոփոխություն» բառերով.

12) 6-րդ մասի 3-րդ կետում «ժամանակահատվածում» բառից հետո լրացնել «ստուգմանը կամ ուսումնասիրությանը վերաբերող հարկի կամ վճարի գծով» բառերը.

Հոդված 18. Օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «1-ին մասով» բառերը փոխարինել «1-ին և 2-րդ մասերով» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 46-րդ հոդվածի՝

4) 2-րդ մասում «չմարվող հարկային պարտավորության» բառերից հետո լրացնել «(բացառությամբ տեղական հարկերի)» բառերը.

5) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) միասնական հաշվից գումարների հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:».

6) 5-րդ մասում «բացառությամբ Օրենսգրքով» բառերից հետո լրացնել «և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով» բառերը:

Հոդված 20. Օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում «մինչև դրանց ներկայացմանը հաջորդող տասներորդ աշխատանքային օրը ներառյալ» բառերը փոխարինել «մինչև Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը, բայց ոչ ուշ, քան կազմակերպության լուծարման օրը» բառերով:

Հոդված 21. Օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում «Եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մինչև անհատ ձեռնարկատիրոջ» բառերը փոխարինել «Եթե անհատ ձեռնարկատերը մինչև» բառերով:

Հոդված 22. Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝

5) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Հարկային մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ նշված հարկային պարտավորության չափը չի կարող փոփոխվել, եթե տեղեկատվությունը տրամադրվել է Օրենսգրքով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում:».

6) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

7) 5-րդ մասում «գույքի» բառից հետո լրացնել «և ժառանգի (ժառանգների) կողմից հարկային պարտավորությունները ստանձնելու» բառերը.

8) 6-րդ մասում «հարկային տարվա դեկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «ամսվան հաջորդող երրորդ ամսվա 20-ը» բառերով:

Հոդված 23. Օրենսգրքի 52-րդ հոդվածի՝ 2-րդ մասի 4-րդ կետում «Ժամանակաշրջանը» բառից հետո լրացնել «կամ Օրենսգրքով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործարքի կամ գործունեության կատարման օրը» բառերը.

Հոդված 24. Օրենսգրքի 53-րդ հոդվածում՝

5) 1-ին մասում «3-րդ և 4-րդ մասերով» բառերը փոխարինել «3-րդ, 4-րդ և 12-րդ մասերով» բառերը.

6) 2-րդ մասում «3-րդ մասերով» բառերը փոխարինել «3-րդ և 12-րդ մասերով» բառերը.

7) 8-րդ մասի 2-րդ պարբերության 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործունեության դադարեցման ժամանակահատվածում հարկ վճարողի կողմից գործունեությունը վերսկսելու և այդ մասին համապատասխան հայտարարություն չներկայացնելու դեպքում հարկ վճարողի գործունեությունը համարվում է վերսկսված՝ գործունեությունը փաստացի վերսկսելու օրվանից:».

8) 9-րդ մասի՝

ա. 1-ին կետում «հաշվարկումը» բառը փոխարինել «և դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների

հաշվարկումն ու վճարումը» բառերով, իսկ «պարապուրդում» բառից հետո լրացնել «կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում» բառերը.

բ. 6-րդ կետում «դուրս գրվող» բառերից հետո լրացել «, ինչպես նաև մինչև գործունեության դադարեցումն ընկած հաշվետու ժամանակաշրջաններում կատարված բոլոր ծախսերի գծով դուրս գրված» բառերը.

գ. 7-րդ կետից հանել «մինչև գործունեության դադարեցումն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար» բառերը.

դ. 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ.

«9) շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ հայտարարության ներկայացումը:».

ե. 10-րդ մասում «Հաշվարկված հարկի կամ վճարի վերաբերյալ հարկային» բառերը փոխարինել «Հարկային» բառով:

Հոդված 25. Օրենսգրքի 54-րդ հոդվածի՝

2) 5-րդ մասում «հաշվարկները ներկայացնելու դեպքերի վրա» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի վրա» բառերը:

Հոդված 26. Օրենսգրքի 55-րդ հոդվածի՝

10) 3-րդ մասի՝

ա. 1-ին կետում «պակասեցումները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը» բառերը.

բ. 2-րդ կետում «միայն ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը» բառերը փոխարինել «ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, իսկ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները) պարունակելու դեպքում նաև ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ձանաչումը» բառերով.

11) 4-րդ մասի 8-րդ կետում «սակագինն» բառը փոխարինել «սակագինը, առևտրային գեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային գեղչը)» բառերով.

12) 4-րդ մասի 9-րդ կետի «բ» ենթակետից հանել «պաշտոնը,» բառը.

13) 4-րդ մասի 9-րդ կետի «գ» ենթակետում «նշումը» բառից հետո լրացնել «, առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը» բառերը.

14) 4-րդ մասի 10-րդ կետի «բ» ենթակետից հանել «պաշտոնը,» բառը.

15) 4-րդ մասի 10-րդ կետի «գ» ենթակետում «նշումը» բառից հետո լրացնել «, ապրանքների նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի և ապրանքը գնորդին է հանձնվում առաքման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը» բառերը.

16) 7-րդ մասի 3-րդ կետի «բ» ենթակետից հանել «պաշտոնը,» բառը.

17) 7-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետում «նշումը» բառից հետո լրացնել «, տեղափոխվող ապրանքի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը» բառերը.

18) 12-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մաս.

«13. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող գյուղատնտեսական արտադրանքի, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող կամ վարձակալությամբ օգտագործվող գույքի, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից ձեռք բերվող ապրանքների, ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, ինչպես նաև կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրվող գույքի գծով առաջացող ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով:»:

Հոդված 27. Օրենսգրքի 56-րդ հոդվածի՝

7) 5-րդ մասի 2-րդ կետ 1-ին նախադասությունում «ծառայությունների ձեռքբերման» բառերը փոխարինել «ձեռքբերման, աշխատանքների ընդունման և ծառայությունների ստացման» բառերով.

8) 6-րդ մասից հանել «(բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնակատարը կամ գործակալը, Օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, չի համարվում ԱԱՀ վճարող)» բառերը.

9) 8-րդ մասի 1-ին կետում «օրը» բառից հետո լրացնել «, կամ աշխատանքները պետք է կատարվեն կամ կատարվումը ավարտվի հաշվարկային փաստաթղթում նշված՝ աշխատանքների կատարման կամ կատարվումը ավարտելու օրը, կամ ծառայությունները պետք է մատուցվեն կամ մատուցվումը ավարտվի հաշվարկային փաստաթղթում նշված՝ ծառայությունների մատուցման կամ մատուցվումը ավարտելու օրը» բառերը.

10) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթուղթը ապրանք մատակարարող,

աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի նախաձեռնությամբ կարող է չեղարկվել՝ հետևյալ դեպքերում.

6) հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել այն հարկ վճարողի անունով, որին ապրանք չի մատակարարվել, որի համար աշխատանք չի կատարվել և (կամ) որին ծառայություն չի մատուցվել.

7) հարկային հաշիվը դուրս է գրվել Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ.

8) Օրենսգրքի 345-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում.

9) ապրանքների մատակարարմանը, աշխատանքների կատարմանը կամ ծառայությունների մատուցմանը վերաբերող հաշվարկային փաստաթուղթը լրացվել է սխալներով, որոնք կարող են այն դուրս գրողի կամ ստացողի համար իրավական կամ ֆինանսական հետևանքներ առաջացնել (օրինակ՝ տուգանք, ծախսագրման կամ հաշվանցման արգելք).

10) հաշվարկային փաստաթղթով մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայության ընդհանուր արժեքի հաշվարկմանը մասնակցող որևէ տվյալ (քանակ (ծավալ), գին, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկի դրույքաչափ կամ ավելացված արժեքի հարկի գումար) լրացվել է սխալ:

Չեղարկված հաշվարկային փաստաթուղթը դրա կողմերի համար Օրենսգրքով սահմանված իրավական հետևանքներ, այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ, չի առաջացնում:».

11) 11-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ մաս.

«11.1. Այն գործարքի մասով, որի կատարման օրը ներառող հարկային տարվանից անցել է երեք հարկային տարի, հաշվարկային փաստաթուղթ (այդ թվում՝ ճշգրտող) չի կարող դուրս գրվել:».

12) 12-րդ մասին հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մաս.

«13. Ճշգրտման ենթակա գործարքի մասով դուրս է գրվում ճշգրտող հարկային հաշիվ կամ ճշգրտող հաշիվ վավերագիր:»:

Հոդված 28. Օրենսգրքի 57-րդ հոդվածի՝

5) 1-ին մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից հանրային ծառայությունների ենթակառուցվածքները շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով տեղափոխվող ապրանքների, **Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից տեղափոխվող հիմնական միջոցների, ինչպես նաև**» բառերը.

6) 2-րդ մասի «բ» կետում «տարանցման հայտարարագրով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ցանցային կապի միջոցներով ապրանքների հետագծելիությունն ապահովող և

հարկային մարմին տեղեկատվություն հաղորդող էլեկտրոնային սարքերով (այսուհետ՝ ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարք)» բառերը.

7) 3-րդ մասի 2-րդ կետում «առաքման» բառը փոխարինել «մատակարարման» բառով.

8) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված այն ապրանքները, որոնք Օրենսգրքի 358.1-րդ հոդվածով սահմանված դեպքում փաստացի մատակարարվում կամ տեղափոխվում են առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի:»:

Հոդված 29. Օրենսգրքի 59-րդ հոդվածի՝

5) 1-ին մասի՝

ա. 1-ին պարբերության «սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով» բառերը փոխարինել «սույն հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով» բառերով.

բ. 4-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Եթե հարկ վճարողը, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, դադարել է համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հայտարարությունում նշված օրը և եթե հարկ վճարողը որպես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, ապա ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում):».

6) 2-րդ մասի առաջին պարբերությունից հանել «բացառապես» բառը.

7) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1 Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ԱԱՀ վճարողներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

«1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման

օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

3) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:»

8) 5-րդ մասում՝

ա. «ԱԱՀ-ի գումարները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը մինչև Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամը գերազանցելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքներ իրականացնելու դեպքում (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման գործարքների), ինչպես նաև Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում այդ գործարքներից Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում ԱԱՀ հաշվարկելու և պետական բյուջե վճարելու պարտավորություն չեն կրում:»:

Հոդված 30. Օրենսգրքի 60-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայության մատուցման գործարքը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում, եթե այն սկսվում և ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:»:

Հոդված 31. Օրենսգրքի 62-րդ հոդվածի՝

6) 2-րդ մասից հանել «՝ անկախ ապրանքի մատակարարման պայմանագրով տարայի վերադարձ նախատեսված լինելու հանգամանքից» բառերը:

7) 4-րդ մասի 2-րդ կետի 2-րդ պարբերության «բ» ենթակետում «ակցիզային հարկի գումարը» բառերից հետո լրացնել «եթե այդ գումարը չի ներառվել վերամշակման արդյունք հանդիսացող ներմուծվող ապրանքի հաշվեկշռային արժեքում» բառերը.

8) 6-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի 2-րդ պարբերությանում «օրն ընդգրկող հարկային տարվան նախորդող հարկային տարվա սկզբից մինչև համապատասխան

գործարքի կատարումը» բառերը փոխարինել «օրվան նախորդող 365 օրվա ընթացքում» բառերով.

9) 7-րդ մասից հանել «էական» բառը.

10) 9-րդ մասի 2-րդ պարբերությանում «սահմանված հարկման բազայի» բառերը փոխարինել «որոշված հարկման բազայի» բառերով:

Հոդված 32. Օրենսգրքի 63-րդ հոդվածի՝

3) 1-ին մասում «սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների» բառերով.

4) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների գծով միայն ՀԴՄ կտրոն է տրամադրել գնորդին:»:

Հոդված 33. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝

6) 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«28. Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափանիշներին բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի՝ օտարումը.».:

7) 36-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով (բացառությամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքերի) արտահանված ապրանքների մատակարարումը.».:

8) 41-րդ կետում «իրերի» բառը փոխարինել «գույքի» բառով.

9) 47-րդ կետի՝

ա. 1-ին պարբերությունում «անձանց» բառը փոխարինել «հարկ վճարողների» բառերով.

բ. «ը» ենթակետում «ներդրումային ֆոնդի կառավարման» բառերից առաջ լրացնել «բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և այլ հարկ վճարողների կողմից» բառերով.

10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 48 և 49-րդ կետեր.

«48) Օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.

49) ներդրումային ֆոնդի կողմից անշարժ գույքի օտարումը տվյալ ներդրումային ֆոնդում մասնակցություն ունեցող անձին, եթե անշարժ գույքը նախկինում ներդրումային ֆոնդի կողմից որպես ներդրումային ֆոնդում փայի կամ բաժնետոմսի դիմաց ներդրում ձեռք է բերվել տվյալ անձից:»

11) լրացնել հետևյալ բովանդակությամբ 50 և 51-րդ կետեր.

50) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից այն օտարերկրյա ապրանքների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

51) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծակցությունը».

Հոդված 34. Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում «այդ» բառը փոխարինել «անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսվող» բառերով:

Հոդված 35. Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետում «ԱԱՀ-ի գումարները» բառերից հետո լրացնել «(մասնակի վճարման դեպքում՝ մասնակի վճարված ԱԱՀ-ի գումարները)» բառերը:

Հոդված 36. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «գրանցվել է» բառերը փոխարինել «ստացել է պետական գրանցում» բառերով:

Հոդված 37. Օրենսգրքի 73-րդ հոդվածի 6-րդ մասում 2-րդ նախադասության մեջ «ավել» բառից հետո լրացնել «կամ պակաս» բառերը, իսկ «պակասեցում» բառից առաջ լրացնել «ավելացում կամ» բառերը:

Հոդված 38. Օրենսգրքի 75-րդ հոդվածի՝

3) 2-րդ մասում «59-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերը փոխարինել «59-րդ հոդվածի 5-րդ մասով» բառերով.

4) 3-րդ մասում «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը սպասարկող հարկային տեսչություն» բառերը փոխարինել «հարկային մարմնի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը սպասարկող ստորաբաժանում» բառերով:

Հոդված 39. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում «59-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերը փոխարինել «59-րդ հոդվածի 5-րդ մասով» բառերով:

Հոդված 40. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում

4) ԱՏԳ ԱԱ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0 ծածկագրերին վերաբերող տողի՝

ա. 3-րդ սյունակում հանել «արժեք՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ» բառերը.

բ. 4-րդ սյունակում «55 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 550 դրամ» բառերը փոխարինել «1 լիտրի համար՝ 800 դրամ» բառերով.

5) ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ծածկագրերին վերաբերող տողում լրացնել նաև ԱՏԳ ԱԱ 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0 ծածկագրերը.

6) 3-րդ մասում «իրացման դեպքում» բառերը փոխարինել «օտարման դեպքում» բառերով:

Հոդված 41. Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ կետեր.

«6) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից ակցիզային հարկով հարկման ենթակա այն օտարերկրյա ապրանքների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

7) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծումը»:

Հոդված 42. Օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ՝

«5) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը»:

Հոդված 43. Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «այսուհետ սույն բաժնում» բառերը փոխարինել «այսուհետ» բառով:

Հոդված 44. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ ենթակետում «հաշվեգրվող տույժերը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով շահութահարկ վճարողին (հարկային գործակալին) վերադարձվող (փոխհատուցվող)՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները» բառերը:

Հոդված 45. Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

4) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով՝

1) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի (այսուհետ սույն մասում՝ շենք) օտարումից եկամուտը հաշվարկվում է դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից (այսուհետ սույն մասում՝ կադաստրային արժեք) ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ԱԱՀ-ի) դեպքում կադաստրային արժեքի և փաստացի հատուցման գումարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, գործարքի կատարման օրը ներառվում է նոր սեփականատիրոջ եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարողը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում նոր սեփականատիրոջ մոտ ներված պարտավորություն չի առաջանում: Ընդ որում՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) կադաստրային արժեքից ցածր գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) օտարելու դեպքում՝

ա. օտարող ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի չափով, որից նվազեցվում է օտարման օրն ընդգրկող ամսվա 1-ի դրությամբ տվյալ շենքի հաշվեկշռային արժեքը, ինչպես նաև ռեզիդենտի մոտ այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը,

բ. գնորդ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ շենքի սկզբնական արժեքը որոշվում է կադաստրային արժեքով, իսկ շենքի կադաստրային արժեքի և փաստացի ձեռքբերման գնի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը որպես ներված պարտավորություն ներառվում է համախառն եկամտի մեջ.

2) շենքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է դրանց կադաստրային արժեքի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշիռն համապատասխանող կադաստրային արժեքի 2.5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ԱԱՀ-ի) դեպքում կադաստրային արժեքի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված

մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի 2.5 տոկոսի և փաստացի վարձակալական վճարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված պահին ներառվում է վարձակալի կամ փոխառուի եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձատուրն կամ փոխատուրն հանդիսանում է անհատ ձեռնարկատեր և նույնպես չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում վարձակալի կամ փոխառուի մոտ ներված պարտավորություն չի առաջանում: Ընդ որում՝

ա. ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին կադաստրային արժեքի 2.5 տոկոսից (տարեկան կամ տարեկանի վերածած) ցածր գումարով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) վարձակալության հանձնման դեպքում՝

- վարձատու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը) և շահութահարկով հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են շենքի ամորտիզացիոն մասհանումները (կարճաժամկետ կամ գործառնական վարձակալության դեպքում), ինչպես նաև ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը,

- վարձակալ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ վարձակալության հետ կապված ծախսերը հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը) և շենքի վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով, իսկ շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսի (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը) և փաստացի վարձավճարի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը որպես ներված պարտավորություն ներառվում է համախառն եկամտի մեջ.

բ. ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին անհատույց օգտագործման հանձնելու դեպքում՝

- փոխատու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութա-

հարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը) և շահութահարկով հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են շենքի ամորտիզացիոն մասհանումները, ինչպես նաև ռեզիդենտի մոտ այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը,

- փոխառու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մոտ վարձավճարները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը) և շենքի վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով, իսկ շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսը (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը) որպես ներված պարտավորություն ներառվում է համախառն եկամտի մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված եկամտի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի՝ հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ:

3) ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձին՝ կադաստրային արժեքի 2.5 տոկոսից (տարեկան կամ տարեկանի վերածած) ոչ պակաս գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) վարձակալության հանձնման դեպքում հարկերը հաշվարկվում են և ակտիվները ու պարտավորությունները հաշվառվում են՝ հիմք ընդունելով գործարքի փաստացի գինը:

Սույն մասի դրույթները չեն կիրառվում, եթե սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):»:

5) 3-րդ մասի 5-րդ կետից հանել «, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա հունիսի 30-ը ներառյալ» բառերը.

6) 4-րդ մասի՝

ա. 9-րդ կետում «335-րդ» բառը փոխարինել «327-րդ» բառով,

բ. 11-րդ կետի «ա» ենթակետում «անհուսալի» բառը փոխարինել «հարկման նպատակով դուրս գրման ենթակա» բառերով.

գ. 11-րդ կետի «թ» ենթակետի «առաջացման» բառը փոխարինել «կետանցված դառնալու օրվան» բառերով:

Հոդված 46. Օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասում «10-12-րդ մասերով» բառերը փոխարինել «~~10~~**11**-13-րդ մասերով» բառերով:

Հոդված 47. Օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասում, 121-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում, 150-րդ հոդվածի 13-րդ մասում, 258-րդ հոդվածի 2-րդ մասում «1-4-րդ կետերով» բառերը փոխարինել «1-5-րդ կետերով» բառերով:

Հոդված 48. Օրենսգրքի 120-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող **յուրաքանչյուր** ֆիզիկական անձ**ի**~~անց~~ հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման գործարքներին վերաբերող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի այն մասը, որը ամսական կտրվածքով գերազանցում է երեք միլիոն դրամը,~~իսկ միանվագ գործարքի գծով՝ երեք հարյուր հազար դրամը~~»:

Հոդված 49. Օրենսգրքի 121-րդ հոդվածում՝

2) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«7) Մինչև հանքի շահագործման սկիզբը կատարված մակաբացման աշխատանքների գծով ճանաչված ակտիվները ամորտիզացվում են հաստատված օգտակար հանածոյի ընդհանուր պաշարի արդյունահանմանը համամասնորեն՝ ներառվելով արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքում: Հանքի շահագործումը սկսելուց հետո կատարված մակաբացման աշխատանքների գծով ծախսերը վերագրվում են մակաբացման աշխատանքների արդյունքում արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին: Մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրելու կարգը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից»:

Հոդված 50. Օրենսգրքի 125-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասի կիրառության իմաստով՝

3) այն հարկ վճարողը, որը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

ա. որևէ օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում,

բ. որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում.

4) եթե նոր հաշվառված անհատ ձեռնարկատերը կամ նուտարը մինչև հաշվառման օրվան հաջորդող օրվա ավարտը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

ա. հաշվառման օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա այդ օրվանից մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում,

բ. հաշվառման օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա այդ օրվանից մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում:»:

4) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների ձեռքբերման համար այդ երկրներում (տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպությանը կատարված կանխավճարների դիմաց արդյունքը կանխավճարի կատարման օրվան հաջորդող 365 օրվա ընթացքում չստացվելու դեպքում կատարված կանխավճարը դրա կատարման օրվան հաջորդող 366-րդ օրը այդ կազմակերպության համար համարվում է Հայաստանի

Հանրապետության աղբյուրներից ստացվող այլ եկամուտ, որի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված դրույքաչափով:»:

Հոդված 51. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «արտադրանք են համարվում» բառերից հետո լրացնել «հարկ վճարողի կողմից իրականացված գործողությունների արդյունքում» բառերը:

2) 1-ին կետի «զ» ենթակետում «բազմամյա տնկիների» բառերը փոխարինել «պտղատու այգիների, հատապտղանոցների» բառերով:

Հոդված 52. Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «բացառությամբ տրված փոխառության դիմաց ոչ ռեզիդենտ կազմակերպություններից կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ստացվող տոկոսային եկամտի» բառերը փոխարինել «բացառությամբ տրված փոխառության կամ ներդրված ավանդի կամ բանկային հաշվի մնացորդի դիմաց ստացվող տոկոսային եկամտի» բառերով:

Հոդված 53. Օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «կատարված» բառը փոխարինել «հաշվարկված» բառով:

Հոդված 543. Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետից հանել «կամ նույն կետով սահմանված ժամկետի լրանալը» բառերը:

Հոդված 554. Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասում և 315-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվառման վայրի հարկային մարմին» բառերը փոխարինել «հարկային մարմնի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը սպասարկող ստորաբաժանում» բառերով:

Հոդված 556. Օրենսգրքի 135-րդ հոդվածի՝

3) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մաս.

«2.1 Նախորդ հարկային տարվա համար ներկայացված շահութահարկի (այդ թվում՝ ճշտված) հաշվարկը հիմք է հանդիսանում այդ հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող առաջիկա կանխավճարի մեծության հաշվարկման համար, եթե հաշվարկը ներկայացվել է մինչև տվյալ հարկային տարվա վերջին կանխավճարի կատարման վերջնաժամկետը:».

4) 6-րդ մասում «61-րդ հոդվածի» բառերը փոխարինել «59-րդ հոդվածի» բառերով:

Հոդված 567. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի՝

4) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ, 65-րդ և 66-րդ հոդվածների համաձայն՝ զինծառայողներին և

նրանց հավասարեցված անձանց համար կատարվող աշխատանքները, նրանց մատուցվող ծառայությունները կամ նրանց՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացվող եկամուտները, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների (ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների) ստացվող դրամական ապահովությունը».

5) 16-րդ կետի՝

ա. «ա.» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույք (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող, ավտոտնակ, ավտոմեքենա) նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում»,

բ. «դ» ենթակետերից հանել «անձնական օգտագործման» բառերը:

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 37-րդ կետով՝

«37) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա շահառուներին վճարվող հատուցման գումարները»:

Հոդված 578. Օրենսգրքի 150-րդ հոդվածի՝

5) 7-րդ մասում «հաշվարկվում է լրացուցիչ» բառերը փոխարինել «ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ» բառերով.

6) 10-րդ մասի 1-ին կետի «տասը» բառը փոխել «քսան» բառով.

7) 12-րդ մասում «կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում» բառերից հետո լրացնել «կամ պայմանագրային ներդրումային ֆոնդում» բառերը.

8) 13-րդ մասում երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով սահմանված չափով եկամտային հարկ չի հաշվարկվում, եթե Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերի բացակայության պայմաններում վճարվող եկամուտների մասով առկա են հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված՝ վճարվող եկամուտները հիմնավորող այլ փաստաթղթեր, որտեղ նշված են ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը»:

Հոդված 589. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասում «~~ֆիզիկական անձանց~~, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ

անհատական տեղեկություններ» բառերը փոխարինել «~~Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց~~ և ~~ինչպես նաև~~ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների» բառերով:

Հոդված 60~~59~~. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասում «ներդրված գումարը» բառերից հետո լրացնել «՝ ներդրման չափով» բառերը:

Հոդված 61~~0~~. Օրենսգրքի 160-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 160. Վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձը

1. Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռքբերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռք բերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝

4) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելուն ուղղված

հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով վերադարձման ենթակա եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց չի վերադարձվում, եթե բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռք բերման գործարքի պայմանագրային արժեքը գերազանցում է 55 միլիոն դրամը,

5) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռքբերելուն կամ անհատական բնակելի տան կառուցմանը փաստացի ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով հիպոտեկային վարկի վարկառուին և առկայության դեպքում համավարկառուներին վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար չի կարող գերազանցել 1.5 միլիոն դրամը,

6) հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո վարկառու և համավարկառու ֆիզիկական անձինք իրենց ընտրությամբ կարող են օգտվել միայն մեկ հիպոտեկային վարկի պայմանագրի մասով:

3. Սույն հոդվածով սահմանված գումարները`

4) վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման եռամսյակային պարբերականությամբ.

5) հարկային գործակալի միջոցով հարկային պարտավորությունները կատարող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման, եթե հարկային գործակալը ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված` եկամտային հարկի հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը.

6) հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման, եթե վարձու աշխատողն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված` եկամտային հարկի պարզեցված հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը:

4. Սույն հոդվածով սահմանված գումարներից վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց վերադարձման ենթակա գումարների առավելագույն չափերը որոշելիս հարկային տարվա եռամսյակները դիտարկվում են առանձին-առանձին:

5. Եթե սույն հոդվածով սահմանված գումարները վերադարձնելուց հետո հարկային մարմին է ներկայացվում եկամտային հարկի ճշտված (պարզեցված) հաշվարկ կամ ստուգման

արդյունքում կամ դատարանի որոշման հիման վրա փոխվում է հարկային մարմին ներկայացված հաշվարկով տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը, որի արդյունքում՝

3) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունը նվազում է ֆիզիկական անձին վերադարձված եկամտային հարկի գումարից, ապա փաստացի վերադարձված եկամտային հարկի գումարի և եկամտային հարկի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով եկամտային հարկի վերադարձման օրվա դրությամբ հարկային գործակալին կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին առաջադրվում է եկամտային հարկի գծով պարտավորություն.

4) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով, կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունն ավելանում է, ապա կատարվում է վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող գումարի վերահաշվարկ:

6. Սույն հոդվածով սահմանված՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Սույն հոդվածի կիրառության նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը վարում է կառուցված և կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, անհատական բնակելի տների ռեեստրը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղեկություններ է տրամադրում հարկային մարմնին:»:

Հոդված 62¹4. Օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում, 180-րդ հոդվածում, «բնապահպանական տեսչություն» բառերը փոխարինել «բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին» բառերով:

Հոդված 63²2. Օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասում «և դրանց» բառերից հետո լրացնել «կամ ընդերքօգտագործման թափոնների» բառերը:

Հոդված 64³3. Օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի՝

3) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ օրենքներով սահմանված կարգով վարչարարության և ստուգման իրավասություն ունեցող ստորաբաժանում.»,

4) 4-րդ կետը ձևաչել ուժը կորցրած:

Հոդված 654. Օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝

1) «ա» ենթակետի աղյուսակում բենտոնիտ օգտակար հանածոյին վերաբերող տողի 2-րդ սյունակում «6» բառը փոխարինել «4» բառով.

2) «բ» ենթակետի աղյուսակում բենտոնիտ օգտակար հանածոյին վերաբերող տողի 3-րդ սյունակում «2500» բառը փոխարինել «1650» բառով.

Հոդված 665. Օրենսգրքի 219-րդ հոդվածի 4-րդ մասում «բնապահպանական տեսչություն» բառերը փոխարինել «բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 676. Օրենսգրքի 220-րդ հոդվածի՝

3) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բնօգտագործման վճար վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան, կազմում և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին են ներկայացնում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները:»,

4) 2-րդ մասում «ընդերքի պետական տեսչություն, բնապահպանական տեսչություն» բառերը փոխարինել «բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին» բառերով:

Հոդված 687. Օրենսգրքի 236-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից» բառերը.

2) 3-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից» բառերը.

3) 4-րդ մասում «Անշարժ գույքի կադաստր վարող» բառերից առաջ լրացնել «Բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից,» բառերը:

Հոդված 698. Օրենսգրքի 251-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ եթե օտարումը կատարվել է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից» բառերը.

2) 5-րդ մասում «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվել է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից» բառերը.

3) 5-րդ մասում «տվյալ համայնքում հաշվառված՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բոլոր օբյեկտների» բառերը փոխարինել «փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ փոխադրամիջոցի» բառերով:

4) 6-րդ մասում «Շարժական գույքի կադաստր վարող» բառերից առաջ լրացնել «Բացառությամբ հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից կատարված օտարման դեպքերի,» բառերը:

Հոդված 7069. Օրենսգրքի 254-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասի 6-րդ կետում և Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում «իրացման շրջանառության և այլ եկամուտների հանրագումարների ամբողջությունը» բառերը փոխարինել «իրացման շրջանառությունների հանրագումարը» բառերով:

4) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով կարող է համարվել շրջանառության հարկ վճարող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում: Սույն մասով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում համարվում է շրջանառության հարկ վճարող անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումների, բացառությամբ այն դեպքերի, երբ շրջանառության հարկ վճարող համարվող հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն: Սույն բաժնի կիրառության իմաստով հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը: Այդ գործունեությունը ներառում է նաև խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ծառայությունները, մասնավորապես սպասարկումը, մուտքի թույլտվությունը:»:

Հոդված 710. Օրենսգրքի 258-րդ հոդվածում՝

5) 1-ին մասի՝

ա. «հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները» բառերը փոխարինել «հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները» բառերով.

բ. աղյուսակի 2-րդ և 6-րդ տողերից հանել «և ավտոտրանսպորտային միջոցների» բառերը.

գ. աղյուսակի «Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտներ» տողից հետո լրացնել նոր տողեր հետևյալ բովանդակությամբ՝

« Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	8
Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացվող շրջանառության հարկ վճարողների կողմից խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև—այլ գործունեությունից ստացվող եկամուտներ	20

»

ե. աղյուսակի 9-րդ տողի «8» բառը փոխարինել «10» բառով.

զ. աղյուսակի 9-րդ տողում «Այլ գործունեությունից» բառերից հետո լրացնել «կամ այլ ակտիվների օտարումից» բառերը.

6) 2-րդ մասում «ներմուծման մաքսային հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի, հաշվարկված մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկերի հանրագումարի կամ ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկման բազայի, հաշվարկված ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի հանրագումարի» բառերը փոխարինել «ներմուծման մաքսային հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի, հաշվարկված մաքսատուրքի, ԱԱՀ-ի և (կամ) բնապահպանական հարկերի հանրագումարի կամ ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկման բազայի, հաշվարկված ԱԱՀ-ի և (կամ) բնապահպանական հարկի հանրագումարի» բառերով:

7) լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության

հետ կապված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի **11-13**-րդ մասերով սահմանված հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցների ձեռքբերման կամ կառուցման ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում դրանց ձեռքբերման ծախսերի) հանրագումարի հինգ տոկոսը: Եթե սույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսը: Սույն մասի կիրառության իմաստով ծախսերի մեջ ներառվում են նաև ձեռքբերվող կամ ներմուծվող ապրանքների համար վճարվող մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները:»:

8) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի **11-13**-րդ մասերով սահմանված հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցների ձեռքբերման կամ կառուցման ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում դրանց ձեռքբերման ծախսերի) հանրագումարի վեց տոկոսը: Եթե սույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 4 տոկոսը: Սույն մասի կիրառության իմաստով ծախսերի մեջ ներառվում են նաև ձեռքբերվող կամ ներմուծվող ապրանքների համար վճարվող մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները:»:

Հոդված 742. Օրենսգրքի 260-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 260. Պետական բյուջե վճարման ենթակա շրջանառության հարկի գումարի հաշվարկման կարգը

5. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի գործունեության (բացառությամբ առևտրական (առք ու վաճառքի) և հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության) արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան դրույքաչափերի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարը:

6. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեության (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեության) արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարի և Օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարից նվազեցվող գումարի տարբերությունը:

7. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարի և Օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարից նվազեցվող գումարի տարբերությունը:

8. Առևտրական (առք ու վաճառքի) կամ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով շրջանառության հարկի հաշվարկման նպատակով իրականացվում է ապրանքների առանձնացված հաշվառում:»:

Հոդված 73. Օրենսգրքի 264-րդ հոդվածում հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում Օրենսգրքի 258-դ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ապրանքներ ձեռք բերելու ծախսերի գծով չնվազեցված մասի 25-ապատիկը նվազեցվում է շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համախառն եկամտից:»:

Հոդված 724. Օրենսգրքի 267-րդ հոդվածի՝

3) 4-րդ մասում «գործունեությունն» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ արտոնագրային հարկի օբյեկտ համարվող գործունեությունը)» բառերը.

4) -5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ՝

«9) հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:»:

Հոդված 753. Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի՝

3) 1-ին կետում «հայտարարության ներկայացման օրվանից» բառերը փոխարինել «հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ)» բառերով.

4) 3-րդ կետում «6-րդ կամ 8-րդ» բառերը փոխարինել «6-րդ, 8-րդ կամ 9-րդ» բառերով:

Հոդված 746. Օրենսգրքի 270-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) Օրենսգրքի 180-րդ հոդվածքով սահմանված՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի»:

Հոդված 757. Օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասը, 276-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 2-րդ մասի 1-ին կետը և 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերը, 277-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին տողը, 278-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասը, 279-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 416-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի 2-րդ կետերը և 7-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 786. Օրենսգրքի 275-րդ հոդվածի՝

7) 1-ին և 2-րդ մասերում «հարկային մարմին են ներկայացնում» բառերից առաջ լրացնել «Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը.

8) 3-րդ մասում «հարկային մարմին է ներկայացվում» բառերից առաջ լրացնել «Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը.

9) 4-րդ մասից հանել «, եթե մինչև արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունում նշված հաշվետու ժամանակաշրջանի սկզբի օրվան նախորդող օրը ներառյալ կատարվել է սույն գլխով սահմանված կարգով և չափով հաշվարկված արտոնագրային հարկի վճարում, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքի» բառերը և երկրորդ պարբերությունը.

10) 5-րդ մասից հանել «, եթե մինչև նոր հայտարարությունում նշված հաշվետու ժամանակաշրջանի սկզբի օրվան նախորդող օրը ներառյալ կատարվել է ավելացված ելակետային տվյալների մասով սույն գլխով սահմանված կարգով և չափով հաշվարկված արտոնագրային հարկի վճարում, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքի» բառերը և երկրորդ պարբերությունը.

11) 6-րդ մասից հանել «թղթային կամ» բառերը.

12) 7-րդ մասից հանել «՝ առանց արտոնագրային հարկի վճարման» բառերը:

Հոդված 779. Օրենսգրքի 275-րդ հոդվածի 7-րդ, 420-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ, 421-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «Սահմանամերձ համայնքներում» բառերը փոխարինել «Սահմանամերձ բնակավայրերում» բառերով, իսկ օրենսգրքի 410-րդ հոդվածի 5-րդ մասում «սահմանամերձ համայնքներում» բառերը փոխարինել «սահմանամերձ բնակավայրերում» բառերով:

Հոդված 8078. Օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «100մ²» բառերը փոխարինել «600մ²» բառերով:

Հոդված 8179. Օրենսգրքի 277-րդ հոդվածում՝

3) 1-ին մասի աղյուսակում «Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն	տարածք, մինչև 20մ ² ներառյալ	30000 դրամ	21000 դրամ	21000 դրամ	5250 դրամ	10500 դրամ
	տարածք, 20-ից մինչև 50 մ ² ներառյալ	30000 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000 դրամ	21000 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500 դրամ	21000 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500 դրամ	5250 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 2625 դրամ	10500 դրամ՝ գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 5250 դրամ
	տարածք, 50 մ ² ավելի՝ մինչև 300 մ ² ներառյալ	75000 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 21000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	13125 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 7500	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000
	տարածք, 300 մ ² ավելի՝ մինչև 500 մ ² ներառյալ	600000 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 12000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	200625 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10

					մ ² համար՝ 4000	մ ² համար՝ 8000
	տարածք, 500 մ ² մակերեսի g ավելի	840000 գումարած 500 մ ² գերազանց ող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 6000	587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500	587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500	280625 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 1750	587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնագրային հարկի ամսական դրույքաչափի կիրառման համար հիմք են ընդունվում «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բնակավայրերը, բացառությամբ սահմանամերձ գյուղերի, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 820. Օրենսգրքի 280-րդ հոդվածի՝

5) 1-ին և 2-րդ մասերում «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

6) 3-րդ մասում «հանրային սննդի ոլորտում իրականացվող,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

7) 1-ին և 2-րդ մասերից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության,» բառերը,

8) 3-րդ մասից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող,» բառերը:

Հոդված 831. Օրենսգրքի 282-րդ հոդվածի՝

5) 2-րդ և 5-րդ մասերում «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

6) 4-րդ մասում «հանրային սննդի ոլորտում իրականացվող,» բառերից հետո լրացնել «ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման,» բառերը.

7) 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության» բառերը:

8) 4-րդ մասից հանել «հանրային սննդի ոլորտում իրականացվող» բառերը:

Հոդված 84. Օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ից մասում «եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ» բառերից հետո լրացնել «դրանք նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմնի հետ» բառերը:

Հոդված 852. Օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, իսկ արտոնագրային հարկի պարտավորությունը հաշվառվում է արտոնագրային հարկով հարկվող գործունեության իրականացման ժամանակահատվածի սկզբի ամսաթվով» բառերը:

Հոդված 863. Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել, իսկ 2-րդ կետում «պետական» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետից ստացվել է գրավոր հանձնարարական, իսկ» բառերը:

Հոդված 847. Օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում լրացնել հետևյալ նոր պարբերություն.

«Ընդ որում, հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը վերստուգում անցկացնելու որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, երբ հարկային ստուգում իրականացրած անձանց գործողությունների դեմ բերված բողոքը հնարավոր է բավարարել միայն վերստուգման դեպքում և եթե վերստուգում իրականացնելու մասին հարկ վճարողը հայտնել է իր գրավոր համաձայնությունը: Վերստուգում իրականացնելու մասին հարկ վճարողի կողմից գրավոր համաձայնություն չհայտնելու դեպքում հարկային ստուգում իրականացրած անձանց գործողությունների դեմ բերված բողոքը այդ մասով մերժվում է»:

Հոդված 858. Օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) հարկային մարմնի մոնիտորինգային համակարգի միջոցով իրականացվող վերլուծության արդյունքները»:

Հոդված 869. Օրենսգրքի 346-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) հարկային մարմնի մոնիտորինգային համակարգի միջոցով իրականացվող վերլուծության արդյունքները»:

Հոդված 9087. Օրենսգրքի 358-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 358.1-րդ հոդված.

Հոդված 358.1. Ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերի կիրառումը

4. ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների տեղաշարժի նկատմամբ հսկողության իրականացման համար կիրառվում են ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարքեր:

5. Ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերը կիրառվում են այն դեպքում, երբ ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքի ձեռքբերման գինը (արժեքը)՝ ըստ հաշվարկային փաստաթղթերի հանրագումարի, գերազանցում է 10 միլիոն դրամը:

6. Հարկային մարմինը սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերը հարկ վճարողներին տրամադրում է անվճար՝ վերադարձման պայմանով: Ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերի տրամադրման և վերադարձման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9188. Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք).»:

Հոդված 9289. Օրենսգրքի 363-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ռեզիդենտ հարկ վճարողի և հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված հարկ վճարողների միջև իրականացվող գործարքը՝ անկախ այդ հարկ վճարողների փոխկապակցվածության հանգամանքից, համարվում է վերահսկվող:»:

Հոդված 930. Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերում «գյուղատնտեսական արտադրանքի» բառերից առաջ լրացնել «Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերը:

Հոդված 941. Օրենսգրքի 380-րդ հոդվածի՝

3) -1-ին և 3-րդ մասերում, 381-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերում, 384-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 416-րդ հոդվածի 1-ին մասում «կանխիկ դրամով» բառերից հետո լրացնել «կամ ալաստիկ քարտերի միջոցով» բառերը:»

4) **3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետ.**

«12) կրպակներում թերթերի և ամսագրերի իրացումը, եթե թերթերի և ամսագրերի իրացման շրջանառության տեսակարար կշիռը գերազանցում է ամբողջ իրացման շրջանառության 50 տոկոսը: Թերթերի և ամսագրերի իրացման շրջանառության հաշվառումն իրականացվում է առանձնացված կարգով:»:

Հոդված 925. Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>), իսկ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը կազմակերպության ներկայացուցչին, անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա ներկայացուցչին, նոտարին կամ նրա ներկայացուցչին տրամադրելու դեպքում՝ նաև համապատասխանաբար ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>).»:

Հոդված 963. Օրենսգրքի 386-րդ հոդվածի 4-րդ մասում «գբաղվողներից» բառը փոխարինել «գբաղվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից» բառերով:

Հոդված 974. Օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «կազմակերպությունների» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատերերի» բառերը:

Հոդված 958. Օրենսգրքի 388-րդ հոդվածի՝

3) 2-րդ մասում «կազմակերպության» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերը.

4) 4-րդ մասում «կազմակերպության» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերը, իսկ «կազմակերպությունների» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատերերի» բառերը:

Հոդված 969. Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի՝

6) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 010511 ծածկագրի տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

0207	ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ 0105 ապրանքային դիրքում դասակարգված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	միս
------	--	-----

7) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 010511 ծածկագրի տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

0209	անյուղ մսից առանձնացված չհալեցրած կամ այլ եղանակով չստացած ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված,	միս
------	--	-----

	աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած	
0210	ընտանի թռչունների միս և մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած. մսից կամ մսի սննդային ենթամթերքից ստացված մանր և խոշոր աղացվածքի ալյուր	միս

8) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 3210 00 ծածկագրի տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

3211 00	պատրաստի չորարարներ	չորարարներ
3212	գունանյութեր (ներառյալ մետաղական փոշիներ և փաթիլներ)՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված, հեղուկ կամ մածուկանման, որոնք օգտագործվում են ներկերի արտադրության մեջ (ներառյալ արժնները), փայլաթիթեղ դրոշմատպման համար, ներկանյութեր և ներկող այլ նյութեր՝ բաժնեծրարված կամ փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	գունանյութեր

9) աղյուսակում ԱՏԳ ԱԱ 3303 00 ծածկագրի տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3303 00	օծանելիք, հարդաջուր	օծանելիք
---------	---------------------	----------

10) աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

3403 19 100 0	քսայուղեր, այլ յուղեր	նավթավերամշակման արտադրանք
3403 19 900 0		
3403 99 000 0		

Հոդված 100⁹⁷. Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և «Անմաքս առևտուր»» բառերը, իսկ «ընթացակարգերով» բառը փոխարինել «ընթացակարգով» բառով:

Հոդված 101⁹⁸. Օրենսգրքի 392-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «, բացառությամբ «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով արտահանվող ապրանքների» բառերը:

Հոդված 102⁹⁹. Օրենսգրքի 393-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասում «Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերը փոխարինել «Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ներմուծվող» բառերով, իսկ «իսկ» բառից հետո լրացնել «Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտադրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերը, ինչպես նաև» բառերը,

4) 5-րդ մասի 3-րդ կետի «2208» բառից հետո բառից հետո՝ հանել «, 2402» բառը:

Հոդված 103. Օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասում «կողմից» բառից հետո լրացնել «հարկային մարմնի սահմանած ձևի դիմումի հիման վրա» բառերը և նույն մասից հանել «հարկ վճարողի դիմումի հիման վրա» բառերը:

Հոդված 104. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 396.1-րդ հոդվածով.

«Հոդված 396.1. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա ապրանքների դրոշմավորման կարգը

2. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում սահմանված լինելու դեպքում հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման պարտավորություն կրող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ կիրառվում են դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար Օրենսգրքով, այլ օրենքներով և դրոշմապիտակների համակարգի կիրառությունն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները:

Հոդված 105. Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց դեպքում սույն մասով սահմանված տուգանքի կիրառության իմաստով, յուրաքանչյուր 15 լրացած օրվա հաշվարկը սկսվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարման ենթակա հարկային պարտավորության մեծությունն արտահայտող վարչական ակտի ամսաթվից»:

Հոդված 106. Օրենսգրքի 403-րդ հոդվածի 3-րդ մասում «հարկային հաշվարկում» բառերը փոխարինել «շրջանառության հարկի հաշվարկում» բառերով:

Հոդված 107. Օրենսգրքի 404-րդ հոդվածից հանել «, իսկ յուրաքանչյուր հարկային տարվա շահութահարկի հաշվարկում հարկային վնասը (առանց հաշվի առնելու նախորդ հարկային տարիներից փոխանցվող հարկային վնասի մեծությունը) մեկ միլիոն դրամ և ավելի չափով ավել ցույց տալու համար գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով» բառերը:

Հոդված 108. Օրենսգրքի 410-րդ հոդվածի`

4) 1-ին, 3-րդ և 5-րդ մասերում «առանց ուղեկցող փաստաթղթի» բառերից հետո հետո լրացնել «կամ առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի» բառերը,

5) 1-5-րդ մասերում «տեղափոխության փաստաթղթավորման» բառերից հետո լրացնել «կամ ապրանքների հետագծելիության ապահովման» բառերը,

6) 8-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության դեպքում սույն հոդվածով սահմանված տուգանքների կիրառության իմաստով ապրանքի գին (արժեք) է համարվում ապրանքի ձեռքբերման գինը:»:

Հոդված 109~~5~~. Օրենսգրքի 416-րդ հոդվածի`

3) 3-րդ մասում «կանոնների» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն հոդվածի 5.1-րդ մասում նշված դեպքի)» բառերը.

4) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մաս.

«5.1 ՀՂՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած լինելու դեպքում կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից այդ ծրագրերի և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագրի միջամտության արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում տպագրված կամ փաստացի վաճառված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության անվանման, ապրանքային դիրքի, աշխատանքի կամ ծառայության կոդի, քանակի և (կամ) ծավալի վերաբերյալ տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն հարկային մարմին ուղարկելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է հինգ միլիոն դրամի չափով:»:

Հոդված 106~~10~~. Օրենսգրքի 421-րդ հոդվածի`

3) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելը համալիր կամ թեմատիկ հարկային ստուգմամբ հայտնաբերելու դեպքում, բացառությամբ սույն հոդված 2-րդ մասով սահմանված դեպքերի, կազմակերպությունից և (կամ) անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի համար Օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի գումարն ու կազմակերպությունը և (կամ) անհատ ձեռնարկատերը նախազգուշացվում է: Սույն մասով սահմանված խախտումը համալիր կամ թեմատիկ հարկային ստուգման ակտով արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության նույն տեսակի (տեսակների) մասով կրկին կատարելու դեպքում կազմակերպությունից և անհատ ձեռնարկատիրոջից

զանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար՝ Օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի կրկնակի չափով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Սույն մասով սահմանված տուգանքի հաշվարկման համար Օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործակիցը հաշվի չի առնվում:»,

4) 4-րդ մասում «3-րդ մասի» բառերը փոխարինել «1-ին և 3-րդ մասերի» բառերով:

Հոդված 11107. Օրենսգրքի 444-րդ հոդվածի՝

3) 7-րդ մասում բոլոր «հայտարարված շահաբաժինների վրա» բառերը փոխարինել «ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա» բառերով.

4) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժինները ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային գույք եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններին ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:»

Հոդված 11208. Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի՝

4) 9-րդ և 10-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել,

5) 4-րդ կետում «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «հավաստագրի տրամադրման օրվանից 5 տարի ժամկետով» բառերով:

6) 5-րդ կետում «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «հավաստագրի տրամադրման օրվանից 5 տարի ժամկետով, ինչպես նաև բացառությամբ նույն օրենքի 8.2-րդ հոդվածով նախատեսված դրույթների, որոնք շարունակում են գործել 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում ստացված հիպոտեկային վարկերի մասով» բառերով:

Հոդված 11309. Օրենսգրքի 446-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Օրենսգրքի 62-րդ, 109-րդ, 145-րդ և 147-րդ հոդվածների կիրառության նպատակով անշարժ գույքի հարկով հարկման բազա է համարվում շենքերի, շինությունների (այդ թվում՝

անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների դեպքում «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, գույքահարկով հարկման բազա համարվող կադաստրային արժեքը, իսկ հողամասերի դեպքում՝ «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2-րդ հոդվածի համաձայն, հողի հարկով հարկվող օբյեկտները»:

Հոդված 1104. Օրենսգրքի 449-րդ հոդվածում՝

3) Օրենսգրքի 449-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

4) լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«3. 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ հարկային հաշիվներում առանձնացված և չհաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող կարգով»:

Հոդված 1151. Օրենսգրքի 450-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3. Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներմուծված և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ առկա դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների մասով ներմուծման ժամանակ վճարված ակցիզային հարկը՝ յուրաքանչյուր տոննայի հաշվով 22000 դրամի չափով համարվում է Օրենսգրքի 92-րդ հոդվածի իմաստով ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումար և ներառվում է 2018 թվականի հունվար ամսվա հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում՝ որպես Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված հումքի մասով հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումար և Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշիվ: Սույն մասի կիրառությունն ապահովելու նպատակով, հարկ վճարողները պարտավոր են հաշվառել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ դիզելային վառելիքի ապրանքային մնացորդները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը՝ հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան, ներկայացնել հարկային մարմին մինչև 2018 թվականի հունվարի 20-ը ներառյալ»:

Հոդված 1126. Օրենսգրքի 451-րդ հոդվածի՝

4) 4-րդ և 5-րդ մասերում «հիմնական միջոցների» բառերից հետո լրացնել «և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով» բառերը.

5) 5-րդ մասի 1-ին կետում «տարբերությունները» բառից հետո լրացնել «՝ հաշվի առած նաև 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում համապատասխան հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի վրա

կատարված կապիտալ բնույթի ծախսերը և օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները» բառերը.

6) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մաս.

«5.1. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված ծախսերը որպես կապիտալ կամ ընթացիկ բնույթի ծախսեր դասակարգելու և հաշվառելու նպատակով սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի դրույթները կիրառելի չեն:»:

2) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ վճարված և փաստացի շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները հաշվանցվում են 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկի կանխավճարների գումարները գերազանցող փաստացի շահութահարկի գումարներից:»:

Հոդված 1137. Օրենսգրքի 456-րդ հոդվածի 8-րդ մասում «8-րդ» բառը փոխարինել «7-րդ» բառով:

Հոդված 1148. Օրենսգրքի 457-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հարկային մարմին ցանցային կապի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ ուղարկող հսկիչ դրամարկղային մեքենաներ չկիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ շրջանառության հարկ վճարողների) մինչև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետը յուրաքանչյուր ամսվա առաջին հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով: Մինչև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետը շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ եռամսյակային տեղեկությունները ներառում են սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող շրջանառության հարկի հաշվարկում:»:

Հոդված 1159. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 1-45-րդ մասերով նախատեսված դեպքերի:

8. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ կետը ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը:

9. Սույն օրենքի 26-րդ հոդված 1-ին կետի «բ.» ենթակետը, 28-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերը, 29-րդ հոդվածի 1-ին կետի մասի «ա.» ենթակետը, 3-րդ մասը կետը, 47-րդ հոդվածը, 7069-րդ հոդվածի 2-րդ կետը, 701-րդ հոդվածի 1-ին կետի «ա.» և «գ.» ենթակետը և 3-րդ կետը, 742-րդ հոդվածը, 742-րդ հոդվածի 2-րդ կետը, 735-րդ հոդվածի 2-րդ կետը, 775-րդ հոդվածը, 802-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 843-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 9087-րդ հոդվածը, 952-րդ հոդվածը և 1048-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից: Մինչև սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «ա.» ենթակետի և 3-րդ մասի, 6970-րդ հոդվածի 2-րդ կետի, 710-րդ հոդվածի 1-ին կետի «ա.» և «գ.» ենթակետի և 3-րդ կետի, 7472-րդ հոդվածի, 742-րդ հոդվածի 2-րդ կետի, 735-րդ հոդվածի 2-րդ կետի, 775-րդ հոդվածի, 802-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, 834-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի ուժի մեջ մտնելը 2018 թվականի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև 2018 թվականի ավարտը շարունակում են համարվել ավելացված արժեքի հարկ վճարող: Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերերը 2018 թվականի ընթացքում արտոնագրային հարկ վճարում և արտոնագրային հարկ վճարող են համարվում մինչև 2018 թվականի հուլիսի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար: 2018 թվականի 2-րդ կիսամյակում ներառված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 281-րդ հոդվածի իմաստով որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը վճարված արտոնագրային հարկի գումարները մուտքագրվում են միասնական հաշիվ 2018 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում:

10. Սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի «ե.» ենթակետը և 4-րդ կետը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

11. Սույն օրենքի 610-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է՝

3) 2018 թվականի հունվարի 1-ից հետո կառուցապատողից (պետությունից կամ համայնքից) ձեռքբերված բնակարանների կամ բնակելի տների նկատմամբ,

4) անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի նկատմամբ.

12. Սույն օրենքի 10711-րդ հոդվածի 2-րդ կետը, 11208-րդ հոդվածի 1-ին կետը և 11309-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

~~12. Սույն օրենքի 107-րդ հոդվածի 2-րդ կետը, 108-րդ հոդվածի 1-ին կետը և 109-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը~~

13. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մինչև 2017 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակաշրջաններին վերագրվող շահույթների մասով 2017 թվականի հունվարի 1-ից հետո ստացած շահաբաժինների գծով հաշվարկված (պահված) եկամտային հարկի գումարները համարվում են գերավճարներ՝ համապատասխան ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում:

14. Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն ապրանքները, որոնց համար մինչև 2018 թվականի հունվարի 1-ը օրենսդրությամբ սահմանված չի եղել դրոշապիտակներով դրոշմավորման իրավական պահանջ և որոնք անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող անձանց կողմից ձեռք են բերվել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը և նրանց մոտ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ որպես ապրանքային մնացորդ առկա են, անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից կարող են իրացվել առանց դրոշմապիտակներով դրոշմավորման՝ մինչև 2018 թվականի մարտի 31-ը ներառյալ:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ Կ-201-05.12.2017,12.12.2017-SՀ-011/1) վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացություն	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 57-րդ հոդված	Եկամտային հարկի մասով նախագծով առաջարկվում է վերանայել (բարձրացնել) ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական նպատակով գույքի օտարման դեպքերում հարկման դրույքաչափերը, մասնավորապես. Նախագծի 57-րդ հոդվածով առաջարկվում է ձեռնարկատիրական առարկա համարվող գույքի օտարումից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկի դրույքաչափը սահմանել 20%-՝ գործող 10%-ի փոխարեն: Նախագծի 56-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույք (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող,	Գտնում ենք, որ ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջարկությունը պետք է դիտարկել ոչ թե միայն առաջարկվող եկամտային հարկի դրույքաչափի տեսանկյունից, այլ առհասարակ ֆիզիկական անձանց կողմից իրականացվող՝ գույքի իրացման գործարքների հարկման առաջարկվող մոդելի տեսանկյունից: Մասնավորապես, ինչպես հայտնի է ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն, եկամտային հարկով չի հարկվում	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

		ավտոտնակ, ավտոմեքենա) նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում: Կարծում ենք, որ ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական նպատակով գույքի օտարման դեպքում հարկային բեռի կրկնակի բարձրացման նպատակահարմարության հարցը լուրջ հիմնավորման կարիք ունի, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերջինս մանրամասն քննարկվել է Ազգային ժողովում ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի ընդունման ժամանակ:	ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումը, եթե անձնական օգտագործման ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կամ եթե անշարժ գույքն օտարվում է ձեռք բերելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Կարծում ենք, որ նշյալ կարգավորումը գույքի օտարումը ձեռնարկատիրական նպատակներով օտարում որակելու առումով գործնականում խնդրահարույց կարող է լինել, քանի որ բացառված չեն դեպքերը, երբ գույքի օտարման գործարքը ձեռնարկատիրական նպատակներ չհետապնդի, այդուհանդերձ Օրենսգրքի վերոնշյալ կարգավորման ներքո համարվի ձեռնարկատիրական նպատակներով գույքի օտարում: Այս առումով նախագծով առաջարկվում է վերանայել գույքի իրացումը ձեռնարկատիրական որակելու Օրենսգրքով ամրագրված մոտեցումները՝ հստակեցնելով, որ գույքի օտարումը	
--	--	--	---	--

			ձեռնարկատիրական նպատակով օտարում կարող է համարվել, եթե հաշվետու տարվա ընթացքում իրականացվում է նույն տեսակի երկրորդ գույքի օտարումը և այդ երկու միավոր գույքի ձեռքբերումը կատարվել է նախորդ մեկ տարվա ընթացքում: Ինչ վերաբերում է եկամտային հարկի դրույքաչափի բարձրացմանը, ապա հայտնում ենք, որ դրա նպատակը ոչ թե հարկային բեռի ավելացումն է, այլ ձեռնարկատիրական գույքի իրացման գործարքները ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող տնտեսավարող սուբյեկտների միջոցով իրականացնելու համար համապատասխան տնտեսական խթաններ ստեղծելն է, որպեսզի գույքի իրացման գործարքներն իրականացվեն ոչ թե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից այլ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց կողմից, ինչը վերջիններիս հնարավորություն կտա օգտվել շրջանառության հարկի	
--	--	--	--	--

			համակարգից և ավելի ցածր դրույքաչափերից:	
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 40-րդ հոդված	Ակցիզային հարկի գծով. ա) Նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է վերանայել պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղու (2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0) ակցիզային հարկի դրույքաչափերը, սահմանելով 1 լիտրի համար 800 ՀՀ դրամ հաստատագրված դրույքաչափ՝ Հարկային օրենսգրքով սահմանված 55 տոկոս արժեքային, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 550 ՀՀ դրամ նվազագույն դրույքաչափի փոխարեն: Այս առումով, նախ անհրաժեշտ է հասկանալ թե ինչով է պայմանավորված սպիրտային խմիչքների գծով հարկային դրույքաչափերի վերանայման խնդիրը, այն պարագայում, երբ դրանց հարկման մեխանիզմները մանրամասն քննարկվել են Հարկային օրենսգրքի ընդունման ժամանակ: Միևնույն ժամանակ, պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղու հարկային բեռի վերանայման տեսանկյունից, անհրաժեշտ է հասկանալ, թե վերջինիս դրույքաչափի փոփոխությունը ի՞նչ հաշվարկների վրա է հիմնված, մասնավորապես, ո՞ր գնային սեգմենտի համար և ի՞նչ չափով է ավելանալու կամ նվազելու հարկային բեռը՝	ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ-ում իրացվող պտղային և հատապտղային օղիների մեկ շշի իրացման միջին գները կազմում են 3500-4000 դրամ: Հետևաբար, նախագծով առաջարկվող մեկ լիտրի համար 800 դրամի չափով հաստատուն դրույքաչափի սահմանումը միայն հարկային բեռը նվազեցնելու և տեղական արտադրանքի արտադրությանը նպաստելու նպատակ ունի:	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

		հաշվի առնելով 55 տոկոս արժեքային և 550 դրամ նվազագույն դրույքաչափերի կիրառման դեպքում դրանց համամասնությունը: Կարծում ենք, որ պետք է քննարկել նաև արժեքային դրույքաչափի վերացման նպատակահարմարության հարցը՝ բարձր և ցածր արժեք ունեցող ենթակցիզային ապրանքները միևնույն ֆիքսված դրույքաչափով հարկելու դեպքում հայրենական արտադրողների մրցունակության և պետական բյուջեի եկամուտների վրա հնարավոր ազդեցության գնահատման տեսանկյունից:		
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 40-րդ հոդված	Նախագծի 40-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է ակցիզային հարկով հարկել նաև ԱՏԳ ԱԱ 3403 ծածկագրին դասվող շարժիչային յուղերը: Ընդ որում, նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ փոփոխությունը պայմանավորված է հարկման արդարությունը պահպանելու, հարկումից խուսափելու և չարաշահումների դեմ պայքարելու անհրաժեշտությամբ: Պետք է նշել, որ հարկային և մաքսային վարչարարության դեռևս ոչ բավարար մակարդակի պատճառով հնարավոր չարաշահումների առկայությունը անհրաժեշտ հիմք չի հանդիսանում շարժիչային յուղերը հարկելու համար: Ինչ վերաբերում է շարժիչային յուղերը որպես ենթակցիզային ապրանք հարկելու և հարկային բեռի չափը որոշելու հարցին, ապա կարծում ենք, որ վերջինս հավելյալ	Ներկայացված առաջարկության կապակցությամբ կցանկանայինք ընդգծել, որ խնդիրը ոչ թե չարաշահումների դեմ պայքարի վարչարարական գործիքների բացակայությունն է, այլ ավելի շատ դրանք լիարժեք կիրառության ոչ նպատակահարմար լինելը, քանի որ ներմուծվող քսայուղերը ԱՏԳ ԱԱ 3403 ծածկագրին դասվող ապրանքներին դասելու հնարավորության դեմ պայքարը ենթադրում է ներմուծվող բոլոր քսայուղերի նկատմամբ համատարած	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

		քննարկման կարիք ունի՝ ինչպես գների հնարավոր բարձրացման, այնպես էլ ՀՀ պետական բյուջե լրացուցիչ մուտքերի ապահովման տեսանկյունից:	մաքսային վարչարարության հսկողական գործիքակազմի կիրառությունը, ինչը և՛ վարչարարության արդյունավետության, և՛ գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից նպատակահարմար չէ: Ինչ վերաբերում է նախագծով առաջարկվող ծածկագրին դասվող ապրանքներին, ապա պետք է նշել, որ այդ ապրանքները հիմնականում սառեցնող նշանակություն ունեցող քսանյութեր են, որոնց ներմուծման և ձեռնարկատիրական նպատակներով օգտագործման ծավալները մեծ չեն:	
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 33-րդ հոդված	Ավելացված արժեքի հարկի մասով Նախագծի 33-րդ հոդվածով առաջարկվում է վերանայել ԱԱՀ-ի գծով հարկային արտոնությունների շրջանակը, մասնավորապես՝ շրջանառելի, բազմակի օգտագործման տարաների ԱԱՀ-ով հարկման մասով նախատեսվում է կրճատել գործող արտոնության շրջանակը. Առաջարկվում է շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառել ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ, բացառությամբ ՀՀ կառավարության կողմից սահմանված	Մինչև ներկայացված առաջարկությանը անդրադարձ կատարելը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Օրենսգրքով ամրագրված բազմակի օգտագործման տարաների հարկման մոտեցումներին: Օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն, տարայավորված ապրանքների մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ անկախ ապրանքի	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

		չափանիշներին բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքի: Այս առումով հարկ է նշել, որ բազմակի օգտագործման շրջանառելի տարայի ԱԱՀ-ով հարկման նպատակահարմարության հարցը քննարկվել է Հարկային օրենսգրքի ընդունման ժամանակ և որոշվել է պահպանել գործող արտոնության շրջանակը: Կարծում ենք, որ այդ շրջանակի վերանայումն ու արտոնությունից օգտվելու հնարավորության հարցը տնտեսավարող սուբյեկտների համար էական նշանակություն ունի, ուստի առաջարկվում է բազմակի, շրջանառելի տարայի՝ ԱԱՀ-ի գծով արտոնության տրամադրման հիմնական սկզբունքներն ու չափորոշիչները սահմանել օրենքով:	մատակարարման պայմանագրով տարայի վերադարձ նախատեսված լինելու հանգամանքի: Մյուս կողմից Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն, տարա արտադրող չհանդիսացող անձանց կողմից տարայի օտարումը ԱԱՀ-ից ազատված գործարք է համարվում: Այսինքն, տարայավորված ապրանքի իրացման դեպքում տարայի արժեքը հարկվում է ԱԱՀ-ով: Այս առումով նախագծով որևէ փոփոխություն չի առաջարկվում, ինչը նշանակում է, որ տարայավորված ապրանքների իրացման դեպքում տարայի արժեքը հարկվելու է ԱԱՀ-ով, փոխարենը սակայն առաջարկվում է հստակեցնել, թե որ տարաներն են ազատվում ԱԱՀ-ից:	
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 65-րդ հոդված	Բնօգտագործման վճարների գծով՝ Նախագծի 64-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումների համաձայն, «բենտոնիտ» օգտակար հանածոյի համար սահմանվել է հարկային արտոնություն՝ դրույքաչափերի իջեցման միջոցով: Մասնավորապես, բենտոնիտ պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների	Բենտոնիտի բնօգտագործման վճարի դրույքաչափի նվազեցման առաջարկությունը իր ազդեցությունը ունենալու է միայն Իջևանի բենտոնիտի գործարանի գործունեության վրա: Խնդիրը կայանում է նրանում, որ դրույքաչափի	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

		արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափը նախատեսվել է 6%-ից իջեցնել 4%, իսկ բնօգտագործման վճարի հաստատագրված դրույքաչափը՝ 2500 ՀՀ դրամից՝ 1650 ՀՀ դրամ: Այս առումով, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախագծի հիմնավորման մեջ ներկայացված չէ տրամադրվող արտոնության ընդունման անհրաժեշտության կամ տնտեսական հիմնավորվածության վերաբերյալ որևէ գնահատական: Խնդիրը հատկապես կարևորվում է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծի համաձայն՝ հարկային ծախսերի արտոնությունների տարեկան մեծությունը գնահատվել է 395,490մլն. դրամ: Հետևաբար, պետության սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսանկյունից անհրաժեշտ է հարկային արտոնությունների տրամադրման յուրաքանչյուր դեպք դիտարկել Ֆժախս/չհավաքագրվող եկամուտ և ակնկալվող արդյունք՝ տեսանկյունից: Կարծում ենք, որ բենտոնիտ օգտակար հանածոյի մասով հարկային արտոնության տրամադրման հարցը հավելյալ քննարկման կարիք ունի:	բարձրացումը բացասական է անդրադարձել վերջինիս մրցունակության վրա, որի հետևանքով կրճատվում են բենտոնիտի արտահանման ծավալները: Արդյունքում տարածաշրջանում բենտոնիտի սպառման երկրի համարվող ՌԴ-ում բենտոնիտի պահանջարկը սկսել է բավարարվել թուրքական մատակարարների կողմից: Այդ առումով առաջարկվում է բարելավել նշյալ գործարանի մրցակցային առավելությունները: Միաժամանակ, հաշվարկները ցույց են տալիս, որ առաջարկության ընդունման հետևանքով պետական բյուջեի եկամուտների նվազեցում կարող է լինել տարեկան 36-40 մլն. դրամի շրջանակներում, ինչը կարծում ենք բյուջեի եկամուտների վրա էական բեռ չի կարող համարվել:	
--	--	--	--	--

«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 99-րդ հոդված	Նախագծի 96-րդ հոդվածով առաջարկվում է ընդլայնել պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը, մասնավորապես՝ ընդգրկելով USԳԱԱ 0207,0209, 0210 , 3211 00, 3211, 330300, 34031910000, 3403 19 900 0 3403990000 ծածկագրին դասվող՝ ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք, պատրաստի չորաններ, գունանյութեր, օծանելիք, հարդաջուր, քսայուղեր և այլ յուղեր: Հարկ է նշել, որ դրոշմավորման մեխանիզմի կիրառման ապահովումը տնտեսավարող սուբյեկտների մոտ ենթադրում է հավելյալ ծախսեր և տեխնիկական դժվարություններ, մասնավորապես, դրոշմապիտակներ փակցնելու, աշխատողներ ներգրավելու և նման պահանջներ բավարարելու համար: Մյուս կողմից, պետք է հաշվի առնել նաև, որ հարկային վարչարարության այս մեխանիզմի կիրառման նպատակով պետությունը ևս կատարում է ծախսեր՝ դրոշմապիտակների արժեքի փոխհատուցման ձևով: Կարծում ենք, որ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկի ընդլայնման հարցը պետք է դիտարկել հարկային վարչարարության արդյունավետության գնահատման «ծախս/արդյունք» տեսանկյունից, հաշվի առնելով նաև այն կարևոր սկզբունքը, որ պետության կողմից իրականացվող վարչարարությունը չպետք է առաջացնի հավելյալ դժվարություններ տնտեսավարող	Նկատենք, որ դրոշմավորման ենթակա ապրանքների կապակցությամբ ներկայացված առաջարկության մի մասը հստակեցնող բնույթ ունի և ոչ բոլոր ապրանքներն են, որ առաջարկության շրջանակում են դառնում դրոշմավորման ենթակա ապրանքներ: Ինչ վերաբերում է դրոշմավորման ենթակա ապրանքների կապակցությամբ «ծախս/արդյունք» տեսանկյունից վերլուծություններին, ապա հարկ է նկատել, որ դրոշմավորման համակարգի ներդրման կապակցությամբ կատարված բազմաթիվ վերլուծությունները հիմնավորել են այդ համակարգի արդյունավետությունը թե՛ տնտեսավարող սուբյեկտների վրա լրացուցիչ բեռի, և թե՛ պետական բյուջեի ծախսերի ու դրա հետևանքով հավաքագրվող լրացուցիչ եկամուտների տեսանկյունից:	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:
--	-----------------------------	--	---	---

		սուբյեկտների համար:		
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 29-րդ, 71-74-րդ, 77-րդ, 80-83-րդ հոդվածներ	Հանրային սննդի ոլորտի հարկման ռեժիմի վերանայում. Նախագծի մի շարք հոդվածներով առաջարկվող կարգավորումների համաձայն նախատեսվել է՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը պահպանել հանրային սննդի ոլորտում արտոնագրային հարկով հարկման ռեժիմն ու վերականգնել նախատեսված 600 քմ գործող շենք, իսկ 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության տեսակի հարկման ռեժիմը տեղափոխել շրջանառության հարկի դաշտ՝ սահմանելով 10% դրույքաչափ: Մինևույն ժամանակ, նախագծի 70-րդ հոդվածով սահմանվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով 10% դրույքաչափով հաշվարկված շրջանառության հարկի գումարը կարող է նվազեցվել տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ անմիջականորեն կապված, հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական	Հանրային սննդի հարկման համակարգում նախագծով առաջարկվող փոփոխությունների հիմքում դրված են երկու մոտեցումներ. 1. Ձևավորել խթաններ ոլորտում ձևավորվող իրացման շրջանառությունները հաշվառելու և կատարվող ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոլորտի համար գոյություն ունեցող հարկային համակարգը նման խթաններ չի ստեղծում, ինչի հետևանքով ոլորտում ձևավորվող իրացումից հասույթները և կատարվող ձեռքբերումները որևէ կերպ չեն հաշվառվում, 2. Կատարվող փոփոխությունները հարկային բեռի փոփոխության առումով հնարավորինս պետք է չեզոք լինեն և չհանգեցնել ոլորտում հարկային բեռի էական	Ընդունվել է ՀՀ կառավարության ղիրքորոշումը:

	ակտիվների ամորտիզացիոն մասհանումների) հանրագումարի 6%-ի չափով: Ընդհանուր առմամբ, միասնական հարկատեսակով հարկման ռեժիմի պարագայում անշուշտ հնարավոր չէ լիովին ապահովել հարկման արդարության սկզբունքը, սակայն որոշ դեպքերում (հաստատագրված) արտոնագրային հարկատեսակներով գործունեության առանձնակի տեսակներ հարկելու անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոնների առկայությամբ, մասնավորապես՝ ՀՀ տնտեսական կառուցվածքի առանձնահատկություններով պայմանավորված փաստաթղթաշրջանառության ամբողջական կարգավորման դեռևս ոչ բավարար մակարդակով, հարկային և մաքսային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր սուբյեկտիվ դրսևորումներով, կոռուպցիոն ռիսկերի առկայությամբ: Այս համատեքստում, հարկման ռեժիմի ընտրության հարցը պետք է դիտարկել նաև հարկային վարչարարության արդյունավետության, այն է՝ վարչարարության վրա կատարված ծախսերի և ակնկալվող մուտքերի տեսանկյունից: Հանրային սննդի հարկման մեխանիզմների վերանայումը, մեր կարծիքով հավելյալ քննարկման և հիմնավորման կարիք ունի, մասնավորապես՝ հանրային սննդի ոլորտի	ավելացման: Բացի այդ պետք է չմոռանալ նաև այն, որ Օրենսգրքի ընդունված տարբերակում 100քմ-ից ավել սպասարկման սրահ ունեցող հանրային սննդի օբյեկտները տեղափոխվելու են հարկման ընդհանուր համակարգ, ինչը նշանակում է, որ նշյալ ոլորտի հիմնական մասը հարկվելու է կամ շրջանառության հարկով կամ ԱԱՀ-ով: Այլ կերպ ասած՝ իրացման շրջանառությունների հաշվառման տեսանկյունից առաջարկվող փոփոխությունները էականորեն չեն տարբերվում հարկային օրենսգրքով ամրագրված մոտեցումներից: Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած քննարկումների արդյունքում որոշում է կայացվել սահմանել, որ 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը հարկվելու շրջանառության հարկի 8 տոկոս և կատարվող ձեռքբերումները 5 տոկոս նվազեցման հնարավորության
--	---	--

	հարկման մեխանիզմների, մեթոդների և հարկային բեռի արդարացի բաշխման, ինչպես նաև վերը նշված խնդիրների տեսանկյունից: Այս առումով, նախ անհրաժեշտ է տարբերակել համապատասխան փոփոխություններ կատարելով «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում, հանրային սննդի ոլորտում գործունեության տեսակները՝ ըստ «արագ սնունդ»-ի (Fast food), ռեստորանների, սրճարանների ու հանրային սննդի կազմակերպման այլ ձևերի և հարկման առումով դիտարկել «արագ սնունդ»-ը որպես հանրային սննդի գործունեության առանձին տեսակ: Ընդ որում, վերջինիս համար հարկային բեռը պետք է հաշվարկվի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «արագ սննդի» ոլորտում շահութաբերության մակարդակը մի քանի անգամ ավելի ցածր է, քան ռեստորանային, սրճարանային և նմանատիպ հանրային սննդի այլ օբյեկտներում: Հետևաբար, նախագծով առաջարկվող հանրային սննդի ոլորտում միասնական մոտեցմամբ՝ «արագ սնունդ»-ի գործունեության տեսակը և ռեստորանային գործունեության տեսակները շրջանառության հարկի նույն 10% դրույքաչափով հարկելու մոտեցումը, մեր կարծիքով, արդարացի չէ և կարող է հանգեցնել «արագ սնունդ»-ի գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մրցունակության նվազմանն ու շուկայից դուրս մղմանը՝ գների	շրջանակներում և ՀՀ կառավարության կողմից ներկայացված ծառաջարկությունը գործելու է միայն 2019 թվականի հունվարի 1-ից:	
--	---	--	--

		բարձրացման ու, հետևաբար, սպառման ծավալների կրճատման միջոցով: Ուստի, նախագծով առաջարկվող հանրային սննդի ոլորտի գործունեության տեսակի հարկման ռեժիմի ընտրության հիմնավորվածության, հարկային բեռի (դրույքաչափերի վերանայման կամ բարձրացման) հարցերը հավելյալ քննարկաման կարիք ունեն, ինչպես գործարար, ներդրումային և մրցակցային միջավայրերի վրա դրանց հնարավոր ազդեցության գնահատման, այնպես էլ արդյունավետ հարկային վարչարարության իրականացման (առկա ռիսկերը գնահատելու) և պետական բյուջեի անհրաժեշտ մուտքերը ապահովելու տեսանկյունից:		
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 29-րդ, 71-74-րդ, 77-րդ, 80-83-րդ հոդվածներ	Առաջարկվում է Նախագծի 70-րդ հոդվածում Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետում «10» բառը փոխարինել «8» բառով:	ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած քննարկումների արդյունքում սահմանել, որ 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը հարկվելու է շրջանառության հարկի 8 տոկոս և կատարվող ձեռքբերումները 5 տոկոս նվազեցման հնարավորության շրջանակներում և ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջարկությունը գործելու է	Ընդունվել է:

			միայն 2019 թվականի հունվարի 1-ից:	
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահան Հարությունյան	Նախագծի 26-րդ հոդված	Առաջարկում եմ արտահանման համար նախատեսել թղթային հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու հնարավորություն:	Ընդունելի է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հարկային օրենսգրքով ՀՀ կառավարությանը իրավասություն է վերապահված սահմանելու թղթային եղանակով հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու դեպքերը, հայտնում ենք, որ նշյալ առաջարկության հիման վրա ՀՀ կառավարության որոշման մեջ կկատարվեն համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահան Հարությունյան	Նախագծի 26-րդ հոդված	Առաջարկում եմ գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն հանել պարտադիր վավերապայմանների շարքից (նշանակման վայրի հասցեն առաքվող ապրանքների մասով այսպես թե այնպես նշվում է), իսկ ֆիզիկական անձի համար բոլոր դեպքերում հաշվարկային փաստաթղթերում ՀՎՀՀ-ն նշելը պարտադիր համարել միայն առկայության դեպքում:	Ներկայացված առաջարկությունը ընդունելի է: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծով առաջարկվող դրույթները ըստ էության գործելու են համապատասխան ծրագրային ապահովման առկայության դեպքում, որի համարը նախատեսվել է որ նախագծի նշյալ դրույթները գործելու են 2018 թվականի հունվարի 1-ից:	Ընդունվել է:

«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Վահան Հարությունյան	Նախագծի 26-րդ հոդված	ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածը լրացվում է 13-րդ մասով, որտեղ սահմանվում է որ որոշ ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով: Ինչ է նշանակում «հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով» արտահայտությունը, որտեղից պետք է տեղեկանալ դրա մասին: Առաջարկում եմ կամ հստակ գրել թե ինչ նկատի ունեք, կամ գրեք այլ փաստաթղթերով:	Կարծում ենք, որ <<օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթեր>> հասկացությունը հստակեցնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ խոսքը օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող փաստաթղթի մասին է (օրինակ սահմանված հարգով հաստատված (ստորագրված), կամ համապատասխան վավերապայմաններ պարունակող):	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Վահան Հարությունյան	Նախագծի 57-րդ հոդված	ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածում կատարվող լրացմամբ նախատեսվում է եկամտային հարկի հաշվարկում որոշ գույքի տեսակի համար, եթե դրանց ձեռքբերումը և օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում: Նախորդ տարիների ԱԱՀ-ի մասով կիրառվող փորձից ելնելով առաջարկում եմ հստակ գրել, օրացուցային տարին նկատի ունեք, թե 365 օրը:	Խոսքը այստեղ ոչ թե օրացուցային տարվա կամ հարկային տարվա մասին է, այլ 365 օրվա մասին: Այդ առումով պետք է նշել, որ հարկային օրենսգրքով հարկային տարի հասկացություն սահմանված է հետևաբար հաստակ է, որ խոսքը հարկային տարվա մասին չէ, այլ 365 օրերի մասին է:	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահան Հարությունյան	Նախագծի 29-րդ, 71-74-րդ, 77-րդ, 80-83-րդ հոդվածներ	ՀՀ հարկային օրենսգրքի 258-րդ հոդվածը նախատեսվում է լրացնել 3-րդ մասով, համաձայն որի հանրային սննդի գործունեության մեջ շրջանառության հարկի գումարը նվազեցվելու է ծախսերի 6 տոկոսի չափով: Առաջարկում եմ հստակեցնել, օրինակ հաշվետու ժամանակահատվածում ձեռքբերած 100 միավորի գծով կատարած ծախսը նվազեցնել, ինչպես առևտրի բնագավառում է, թե միայն այն մասը, որն օգտագործվել է այդ հաշվետու ժամանակահատվածում:	Առաջարկվող տարբերակով հստակեցվել, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառության հարկի հաշվարկման առումով ծախս են համարվելու բոլոր փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, բացառությամբ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման կամ կառուցման ծախսերի:	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահան Հարությունյան	Նախագծի 33-րդ հոդված, 2-րդ կետ	ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 36-րդ կետը փոփոխվում է և սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում է ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով (բացառությամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքերի) արտահանված ապրանքների մատակարարումը: Ժամանակավոր ներմուծված ապրանքի վերաարտահանումը (վերադարձը) չի կարող ապրանքի մատակարարում լինել (սեփականության իրավունքը ներկրողին չէր էլ անցել, որ հիմա արտահանելուց անցնի դիմացի կողմին), և հետո չի կարող	Ընդհանուր առմամբ ներկայացված նկատառումները հասկանալի են: Անհրաժեշտ է սակայն նկատի ունենալ, որ նախագծով վերաարտահանման դեպքերի ԱԱՀ-ով հարկման ընթացակարգերի փոփոխություններ չեն նախատեսվում, առաջարկվող գուտ հստակեցնող են:	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

		«Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում այդ գործառնությունը դիտարկվել որպես ԱԱՀ-ից ազատված գործարք և մասնակցել ԱԱՀ-ի դեբետի պակասեցման համամասնությանը: Օրինակ ընկերությունը, ժամանակավոր ներմուծել է տեխնիկա և օգտագործել է ԱԱՀ-ով հարկվող գործարքների համար (շինարարություն մեջ շինտեխնիկա, համերգների համար հավաքվող բեմ և այլն), ապա վերաարտահանել է: Ըստ էության, ընկերությունն ԱԱՀ-ից ազատված գործարք դասական իմաստով չի իրականացրել, հետևաբար իր գործունեությանը վերաբերող ԱԱՀ-ի դեբետները չպետք է պակասեցնի: Առաջարկում եմ համապատասխան փոփոխություններ նախատեսել, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՀՊԾ 05.08.2008թ. N5 պաշտոնական պարզաբանմամբ այն նախատեսված էր:		
ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր «Ելք» խմբակցություն ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Մանե Թանդիլյան	Նախագծի 61-րդ հոդված	Հարկային օրենսգրքով նախատեսվող փոփոխությունների նախագծի 60-րդ հոդվածի 2.1) կետով վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի մասով սահմանվում է սահմանափակում, համաձայն որ եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական	Ներկայացված առաջարկության ընդունումը հակադրվում է ՀՀ կառավարության նպատակադրումներին, քանի որ մեր կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 55 մլն. դրամի շեմը բավարար չեմը Երևան քաղաքում մինչև 110 քմ բնակարան ձեռքբերելու համար: Հետևաբար գտնում ենք, որ առաջարկվող շեմը	Չի ընդունվել:

	անձանց չի վերադարձվում, եթե բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռք բերման գործարքի պայմանագրային արժեքը գերազանցում է 55 միլիոն դրամը: Միննույն ժամանակ 2.2) կետով նախատեսվում է սահմանափակում, համաձայն որի վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար չի կարող գերազանցել 1.5 միլիոն դրամը: Առաջարկում ենք բնակարանի կամ բնակելի տան արժեքի սահմանափակումը հանել թողնելով միայն եկամտահարկի վերադարձման առավելագույն գումարը: Միաժամանակ, որպես հիմնավորում նշվում է՝ 1. Բնակարանի արժեքի սահմանափակումը ավտոմատ սահմանափակում է փոքր վարկի հնարավորությունը՝ անկախ կնախավճարի չափից՝ օրինակ 60 մլն արժողությամբ բնակարան ձեռքբերելու դեպքում 40 մլն վարկի դեպքում չի նախատեսվում եկամտահարկի վերադարձ, իսկ 55 մլն արժողությամբ բնակարան ձեռքբերելու դեպքում 50 մլն վարկի դեպքում կիրականացվի եկամտահարկի վերադարձ, 2. Սահմանափակվում է նաև եկամտահարկի մասնակի վերադարձից օգտվելու հնարավորությունից, այսինքն կան դեպքեր, երբ քաղաքացու կողմից տոկոսների վճարումը գերազանցում է եկամտահարկի չափը և նրա համար	բնակչության սոցիալական խնդիրների լուծման և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման տեսանկյուններից օպտիմալ չեմ է:
--	--	--

	ընդունելի է մասնակի վերադարձի հնարավորությունը՝ օրինակ 60 մլն վարկի դեպքում, քաղաքացին ստանում է ամսական 500.000 դրամ, մնացածը ինքն է վճարում, 3. Կառուցապատողների մոտ առաջանում է խաղի կանոնների փոփոխություն, քանի որ շատերը ներդրումներ են կատարել, հաջորդ տարի բնակարան վաճառելու նպատակով՝ օգտվելով օրենքի հնարավորությունից, քանի որ բավական դժվար է այսօր բնակարան վաճառելը, ինչ էլ խանգարում է ոլորտի զարգացմանը: Արդյունքում, բազմաթիվ ներդրողներ ունենալու են լուրջ խնդիրներ, քանի որ մեկ ամսում կատարվող փոփոխությունը ներդրումային միջավայրի լուրջ խոչընդոտ է, 4. Շատերը փորձելու են օգտվել հնարավորությունից՝ «տեղավորվելով» օրենքի շրջանակներում, այսինքն 60-80մլն արժեքով բնակարանները ձևակերպելու են 55 մլն, որ գոնե մասամբ օգտվեն հնարավորությունից, մնացած մասը վճարելով կանխիկ՝ հարկային շրջանառությունից դուրս: Արդյունքում ունենալու ենք պարտադրված սովերային գործարքների աճ: 5. Գումարային սահմանափակման հանելը չի ավելացի բյուջեի վրա բեռը, դեռ ավելին կմեծացնի մուտքերը, քանի որ 55 մլն դեպքում վճարվում է ԱԱՀ և շահութահարկ այդ գումարից՝ վերադարձնելով ամսական	
--	--	--

		500.000 դրամ, 80-100 մլն դեպքում, կվճարվի ավել ԱԱՀ և շահութահարկ՝ նույնպես վճարելով 500.000 դրամ եկամտահարկի վերադարձ:		
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սահակյան	Նախագծի 94-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 90-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 380-րդ հոդվածի՝ 1)3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերում <<ցուղատնտեսական արտադրանքի>> բառերից առաջ լրացնել <<Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերը, 2)3-րդ մասը լրացնել նոր՝ 12-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ՝ «12)կրպակներում թերթերի և ամսագրերի վաճառքի, պայմանով, որ թերթերի և ամսագրերի իրացման տեսակարար կշիռը գերազանցում է ապրանքաշրջանառության ծավալի 50 տոկոսը: Թերթերի և ամսագրերի իրացումից հասույթի հաշվառումն իրականացվում է առանձնացված կարգով:»	Ընդունվել է: Նախագծի 92-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Աշոտ Արսենյան		Խնդրում եմ տալ պարզաբանում՝ արդյոք ՀՀ հարկային օրենսգրքի պահանջները սահմանափակում են արտահանվող ապրանքների գծով բազմակի շրջանառելի տարայի ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքը, թե՛ ոչ:	Արտահանվող ապրանքի տարան չի կարող համարվել բազակի օգտագործվող կամ բազմակի շրջանառելի տարա, հետևաբար դրա ձեռք բերման ժամանակ մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման առումով սահմանափակումներ չկան:	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն»	Նախագծի 61-րդ հոդված	Առաջարկվում է հանել 2018 թվականի հունվարի 1-ից հետո եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից	Ներկայացված առաջարկության ընդունումը հակադրվում է ՀՀ	Չի ընդունվել:

խմբակցություն ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Արման Սադաթեյան		Ֆիզիկական անձանց միայն մեկ անգամ օգտվելու սահմանափակումը:	կառավարության նպատակադրումներին, քանի որ ՀՀ կառավարության նպատակադրումը այն, որպեսզի եկամտային հարկի վերադարձի հնարավորությունից օգտվեն բնակարանային ապահովման խնդիր ունեցող անձինք, ընդ որում պետական բյուջեի միջոցների արդյունավետ ծախսման տեսանկյունից տրամաբանական է, որ պետությունը այդ խնդիրների լուծմանը մասնակից դառնա միայն մեկ անգամ:	
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Միհրան Հակոբյան	Նախագծի 48-րդ հոդված	Նախագծի համաձայն՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով 3 միլիոն դրամից ավել ծառայություններ մատուցող ընկերությունները հարկվելու են և շահութահարկով, և եկամտային հարկով՝ 43 տոկոս: Առաջարկվում է վերանայել 3 միլիոնի շեմը, ինչպես նաև հստակեցվնել, որ 3 մլն սահմանափակումը վերաբերում է յուրաքանչյուր ֆիզիկական անձի հետ կնքված գործարքների հանրագումարին:	Ներկայացված առաջարկության կապակցությամբ հայտնում ենք, ՀՀ կառավարությունը ևս մեկ անգամ քննարկել է առաջարկվող վերանայելու հնարավորությունը և երկրորդ ընթերցման ներկայացված նախագծից հանվել է 300 հազար դրամին վերաբերող սահմանափակումը: Ինչ վերաբերում է 3 միլիոն դրամի շեմին, ապա այդ կապակցությամբ հայտնում ենք, որ այն ըստ էության կրկնում է ներկայումս գործող օրենսդրությամբ սահմանված	Ընդունվել է:

			սահմանափակումները, քանի որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն երկկողմանի փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը հարկվող շահույթը որոշելու նպատակով համախառն եկամտից կարող են նվազեցվել ամսական 3, տարեկան 36 միլիոն դրամի չափով: Ինչ վերաբերում է 3 միլիոն դրամի շեմը վերանայելու առաջարկության, ապա հայտնում ենք, որ այն վերանայելու առաջարկության ընդունումը համարում ենք խնդրահարույց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չնայած այն հանգամանքի, որ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում վճարվող եկամուտները հարկվում են եկամտային հարկի բարձր դրույքաչափերով, այդուհանդերձ նման վերանայումը կարող է հանգեցնել հարկվող շահույթը փաստաթղթերով չհիմնավորված ծախսերով անհարկի նվազեցնելու հնարավորությունների:	
--	--	--	---	--

			Միաժամանակ, նախագծով հստակեցվել է, որ 3 մլն սահմանափակումը վերաբերում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող յուրաքանչյուր ֆիզիկական անձի հետ հաշվետու ամսում կնքված գործարքների հանրագումարին:	
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 99-րդ հոդված	Առաջարկվում է Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն ապրանքները, որոնց համար մինչև 2018 թվականի հունվարի 1-ը օրենսդրությամբ սահմանված չի եղել դրոշմապիտակներով դրոշմավորման իրավական պահանջ և որոնք անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող անձանց կողմից ձեռք են բերվել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը և նրանց մոտ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ որպես ապրանքային մնացորդ առկա են, անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից կարող են իրացվել առանց դրոշմապիտակներով դրոշմավորման՝ մինչև 2018 թվականի մարտի 31-ը ներառյալ:	Ընդունվել է: Նախագծի անցումային դրույթներում ավելացվել է 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. <<7. Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն ապրանքները, որոնց համար մինչև 2018 թվականի հունվարի 1-ը օրենսդրությամբ սահմանված չի եղել դրոշմապիտակներով դրոշմավորման իրավական պահանջ և որոնք անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող անձանց կողմից ձեռք են բերվել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը և նրանց մոտ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ որպես ապրանքային մնացորդ առկա են, անմիջական արտադրող	Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:

			կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից կարող են իրացվել առանց դրոշմապիտակներով դրոշմավորման՝ մինչև 2018 թվականի մարտի 31-ը ներառյալ:>>:	
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	Նախագծի 99-րդ հոդված	Նախագծի 96-րդ հոդվածով առաջարկվում է դրոշմապիտակներով դրոշմավորել թարմ, պաղեցրած կամ սառեցրած ընտանի թռչունների միսը: Այդ կապակցությամբ նշվում է, որ լրացուցիչ բեռ է դրվում տնտեսավարող սուբյեկտի վրա այն իմաստով, որ վերջինս պարտավոր է ձեռք բերել դրոշմավորման համար համապատասխան սարքավորումներ, ավելին գործնականում հնարավոր չէ դրոշմավորել օրինակ կտրտած թարմ հավը կամ նրա ենթամթերքները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է վերանայել նախագիծը և դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկից հանել թարմ, պաղեցրած կամ սառեցրած ընտանի թռչունների միսը:	Առաջարկն ընդունելի չէ, քանի որ գործող օրենսդրությամբ խնդիրներն արդեն իսկ կարգավորված են: Մասնավորապես, համաձայն հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված՝ շշալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված)՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների վրա ՀՀ տարածքում օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն օտարվում կամ սպառվում են նույն տարայավորմամբ (փաթեթավորմամբ) ու ապրանքային տեսքով՝ առանց	Ընդունվել է ՀՀ կառավարության առաջարկությունը:

		քաշը (ծավալը) փոփոխելու: Այս դրույթով, ըստ էության սահմանվում է երկու կարևոր նորմ. 1. դրոշմապիտակավորման են ենթակա միայն այն ապրանքները, որոնք արտադրողի կողմից (բնականաբար իր տեխնոլոգիական գործընթացով (կամ պատվիրատուների պատվերով) նախատեսված կամ սահմանված ձևով) շաղկված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված) են. 2. տարայավորված ապրանքների օտարման հետագա փուլերում նույն ապրանքատեսակը ոչ նույն փաթեթավորմամբ, այսինքն՝ «կշռային կամ հատային» եղանակով վաճառելիս դրոշմապիտակավորման իրավական պահանջը վերանում է: Միաժամանակ, համաձայն հարկային օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասի, ակցիզային դրոշմանիշերով և (կամ)	
--	--	--	--

			դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն են կրում ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով և ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող և (կամ) ՀՀ-ում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի «Ապրանքների դրոշմավորման կանոնները սահմանելու մասին» թիվ 773-Ն որոմամբ հաստատված կարգով տրված են որոշակի իրավական բնորոշումներ, որոնցով ևս հիմնավորվում է միայն տարայավորված կամ փաթեթավորված ապրանքների դրոշմապիտակավորման իրավական պահանջը, մասնավորապես՝ 1. Օրենսգրքին համապատասխան՝	
--	--	--	---	--

		ապրանքների դրոշմավորման պարտավորություն կրող անձինք ապրանքները՝ դրոշմավորում են ինքնուրույն՝ համապատասխանաբար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչությունից կամ հաշվառման մաքսատնից ձեռք բերված դրոշմանիշերը (դրոշմապիտակները) այդ ապրանքների վրա փակցնելու միջոցով: 2. Դրոշմանիշը (դրոշմապիտակը) պետք է փակցված լինի ապրանքի (տարայի) վրա առավել տեսանելի տեղում՝ վերին կամ կողային մակերեսներին, այդ թվում՝ պիտակի վրա: 3. Դրոշմանիշը (դրոշմապիտակը) պետք է փակցված լինի այնպես, որպեսզի ապահովվի ապրանքի անվանման, հայերեն մակնշման և պիտանիության ժամկետի վերաբերյալ նշումների ընթեռնելիությունը: ՀՀ կառավարությունը գտնում է, որ եթե այնուամենայնիվ, որոշակի օրենսդրական կարգավորումների	
--	--	--	--

			անհրաժեշտությունը առկա է, դրանք կարելի է իրականացնել վերհիշյալ ՀՀ կառավարության 773-Ն որոշմամբ հաստատված կարգում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր «Ելք» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության		Առաջարկվում է նախագիծը խմբագրել այնպես, որ ներպետական հարկային օրենսդրությունից առհասարակ դուրս գան շահաբաժինների հարկման վերաբերյալ դրույթները, քանի որ. 1) շահաբաժինների հարկումով հարկայինը հնարավորություն է ստանում շրջանառության հարկով աշխատողների մոտ կատարել համալիր ստուգում՝ ծախսային փաստաթղթերի մանրակրկիտ ստուգման միջոցով, իսկ չհիմնավորված շահաբաժինը կհարկվի որպես այլ եկամուտ՝ ավելի բարձր տոկոսադրույքով: Փաստացի շրջանառության հարկով հարկվողները կհարկվեն համապատասխան տոկոսադրույքով, իսկ շահաբաժիններ ստանալիս կհարկվեն եկամտային հարկի դրույքաչափերով: Շրջանառության հարկի հիմնական նպատակը փոքր ու միջին բիզնեսին փաստաթղթավորման պահանջից ազատումն է, սակայն ստացվում է, որ հարկային մարմնին տալով նման լծակ, ՓՄՁ-ին նորից դնում ենք ճշգրիտ թղթաբանություն վարելու բարդ գործառույթի առջև ու կրկին թողնում	Մինչև շահաբաժինների հարկման կապակցությամբ ներկայացված հարցադրմանը անդրադառնալը անհրաժեշտ է հստակ ընդգծել, որ շահաբաժինները համարվում են ընկերության բաժնետերերի եկամուտներ և դրանց հստակ տարանջատվում են ընկերության եկամուտներից: Այսինքն, ակնհայտ է, որ շահաբաժինների հարկումը ամենևին էլ չի նշանակում, որ տեղի է ունենում միևնույն անձի միևնույն եկամուտների կրկնակի հարկում, քանի որ ընկերության մոտ հարկվում է ոչ թե շահաբաժինը, այլ ընկերության եկամուտների և ծախսերի տարբերության հետևանքով առաջացող շահույթը, իսկ բաժնետիրոջ մոտ՝ այդ շահույթի բաշխման հետևանքով առաջացող շահաբաժինը: Ակնհայտ է, որ	Չի ընդունվել:

	միայնակ հարկային վարչարարության և ճնշման լծակների արջև: 2) շահաբաժինների հարկումը կրկնակի հարկում է, քանի որ միևնույն գումարն սկզբից հարկվում է առևտրային կազմակերպության կողմից՝ շահութահարկով, այնուհետև դրա մասնակիցների ստացած շահաբաժիններից՝ եկամտային հարկի տեսքով: Հարկման նման կարգ գործում է օրինակ Ֆրանսիայում, որտեղ ևս այդ կարգավորումը մշտապես եղել է դժգոհության առարկա: Սակայն ամեն դեպքում Ֆրանսիան չունի ներդրումների խթանման խնդիր, ինչպես Հայաստանը: Ավելին, ներդրումների ծավալը վերջին տարիներին բառացիորեն գահավիժել է, և այժմ հանրապետությունում գերխնդիր է ինչպես օտարերկրյա, այնպես էլ ներպետական մակարդակով ներդրումների ծավալի ավելացումը, սակայն այդ խնդրի լուծումից ավելի ենք հեռանում՝ շահաբաժինների հարկման վերաբերյալ օրենքի ընդունմամբ: Այստեղ ուսանելի և կիրառելի է Վրաստանի օրինակը, մասնավորապես՝ Վրաստանում սահմանվել է, որ 2017 թվականից հարկվելու են շահաբաժինները՝ եկամտային հարկով, սակայն չի հարկվելու կազմակերպության շահույթը՝ շահութահարկով: Նման մոտեցումը խթանում է միջոցները բիզնեսում պահելն ու շրջանառելը՝ փաստացի խթանելով ներդրումները: 3) Ի վերջո, Հայաստանի	այո շահաբաժինը ծագում է ընկերության շահույթից, բայց միայն շահույթից ծագած լինելու հանգամանքը բավարար չէ պնդելու որ տեղի է ունենում շահույթի կրկնակի հարկում: Ինչ վերաբերում է շահաբաժինները հարկելու հետևանքով շրջանառության հարկ վճարողների մոտ համալիր հարկային ստուգումներ իրականացնելու հարկային մարմնի իրավունքների (հնարավորություններ) հետ կապված հարցադրմանը, ապա այդ կապակցությամբ հարկ է ընդգծել, որ շահաբաժինների հարկման հանգամանքը չէ, որ հարկային մարմնին հնարավորություն է տալիս հարկ վճարողների մոտ իրականացնելու համալիր ստուգումներ, քանի որ համալիր ստուգումների իրականացնելու ընթացակարգերը սահմանված են Օրենսգրքով: Այլ կերպ ասած՝ շահաբաժինների հարկման համակարգի բացակայությունը շրջանառության հարկ	
--	--	--	--

		Հանրապետությունը բազմաթիվ, այդ թվում նաև զարգացած տնտեսություն ունեցող երկրների հետ չունի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրեր, ինչը նշանակում է պակաս շահագրգռվածություն այդ երկրների ռեզիդենտների կողմից Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ կատարելու համար:	վճարողների մոտ համալիր ստուգումների իրականացնելու հարկային մարմնի իրավունքը բացառող հանգամանք չէ: Ներդրումների խրախուսման հետ կապված հարկ ենք համարում ընդգծել, որ Օրենսգրքով նման խթաններ ստեղծված են, որի շրջանակներում բաժնետեր ֆիզիկական անձինք հնարավորություն են ունենում ստացված շահաբաժինները ընկերությունում վերաներդնելու դեպքում հետ ստանալու այդ շահաբաժինների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները: Միաժամանակ կրկնակի հարկման համաձայնագրերի հետ կապված հարկ ենք համարում ընդգծել, որ տեղին չէ այն պնդում, որ Հայաստանի Հանրապետությունը բազմաթիվ զարգացած տնտեսություն ունեցող երկրների հետ չունի կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերը, քանի որ ՀՀ-ն հիմնական առևտրային գործընկեր երկրների հետ	
--	--	--	--	--

			(օրինակ ԵՄ անդամ բոլոր երկրների հետ, բացառությամբ Պորտուգալիայի) ունի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրեր:		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր «Ելք» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության		Առաջարկվում է նախագիծը եկամտային հարկի մասով վերախմբագրել և վերադառնալ 2015 թվականի հոկտեմբերի հայեցակարգին՝ նվազեցնել եկամտային հարկը՝ համապատասխան հիմնավորումներով: Մասնավորապես՝ ի սկզբանե նշվում էր, որ անհրաժեշտ է նվազեցնել եկամտային հարկը մինչև 20% և դա բացատրվում էր հետևյալ կերպ՝ «Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձից հաշվարկվող հարկային բեռը համեմատաբար բարձր է: Այս հանգամանքը նկատելիորեն խոչընդոտում է ազգային տնտեսության մրցունակությանը և բացի այդ, խրախուսում է աշխատավարձի թերհայտարարագրումը», մինչդեռ 2018 թվականի հունվարի 01-ից գործելու են եկամտային հարկի հետևյալ դրույքաչափերը՝		Ներկայացված առաջարկության կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել, որ ընդհանուր առմամբ եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման առաջարկությունը ընդունելի է: Անհրաժեշտ է սակայն հաշվի առնել այն հանգամանքը, որ եկամտային հարկի դրույքաչափի նվազեցումը չի կարող միակողմանի կատարվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա հետևանքով պետական եկամուտների մեծ չափով կորուստ է ակնկալվում (օրինակ 20 տոկոս սահմանելու դեպքում ակնկալվում է մինչև 60 մլրդ. դրամի եկամուտների	Չի ընդունվել:
		Հարկման բազայի ամսական մեծությունը	Եկամտային հարկի Դրույքաչափը	նվազեցում): Այդ կապակցությամբ տեղին է ընդգծել, որ հարկային օրենսգրքի մշակման	
		Մինչև 150.000 ՀՀ դրամ	23%	հայեցակարգային փաստաթղթում խոսքը միայն	
		150.001 –	34500 դրամ՝ գումարած	եկամտային հարկի	

		2.000.000 ՀՀ դրամ	150000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը	դրույքաչափերի նվազեցման մասին չէր: Խոսքը նաև հարկային արտոնությունների	
		2.000.000-ից ավելի ՀՀ դրամ	552500 դրամ՝ գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը	կրճատման մասին էր, ինչով հնարավոր կլինել փոխհատուցել պետական բյուջեի եկամուտների	
		Եկամտային հարկի ավելացումն ունենալու է անխուսափելի շրթայական ազդեցություն: Մասնավորապես, նվազելու է տնօրինվող եկամուտը, ինչի արդյունքում նվազելու են սպառման ծավալները, ինչն էլ իր հերթին բերելու է սպառման անուղղակի հարկերի (ավելացված արժեքի և ակցիզային հարկեր) նվազ վճարմանը պետական բյուջե: Փաստացի հնարավոր է, որ երկարաժամկետ կտրվածքով ստանանք հակառակ՝ բացասական արդյունք՝ պետական բյուջեի մուտքերի մասով: Մյուս կողմից այս դրույքաչափերը չեն նպաստելու սոցիալական արդարացի վերաբաշխմանը, քանի որ գումարները գանձվելու են առավելապես միջին խավից՝ և՛ բարձրացվում է տոկոսադրույքը, և՛ նվազում է պրոգրեսիվ հարկման շեմը: Այսպես, Նախագծի համաձայն՝ եթե անձը ստանում է 6 մլն ՀՀ դրամ անվանական աշխատավարձ, որը կարող է համարվել շատ բարձր եկամուտ, վճարելու է 34.080 ՀՀ դրամով ավելի պակաս հարկ, քան գործող օրենսգրքով: Մինչդեռ 1.5 մլն ՀՀ դրամ ստացողը, ով ըստ էության միջին խավի վարձու աշխատող է, վճարելու է 50.520 ՀՀ		նվազեցումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման ցանկացած առաջարկությունը առանց պետական բյուջեի եկամուտների նվազեցումը փոխհատուցելու հնարավորությունների ընդունելի համարվել չի կարող: Ինչ վերաբերում է հարկային բեռի փոփոխությանը, ապա հարկ ենք համարում ընդգծել, որ Օրենսգրքով ամրագրված դրույքաչափերի դեպքում հարկային բեռի ավելացում աշխատողների 90 տոկոսի մոտ տեղի չի ունենում, ավելին նշված անձանց մոտ տեղի է ունենում տնօրինվող եկամուտների աճ: Հետևաբար բնակչության հիմնական մասի համար եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխությունը տնօրինվող եկամուտների փոփոխության	

		դրամով ավել եկամտային հարկ: Ավելին, միայն պաշտոնական տվյալներով 1/3-ից ավելի աղքատություն ունեցող երկրում եկամտային հարկի բարձրացումը կարող է ունենալ միայն բացասական հետևանքներ, ինչպիսիք են օրինակ աշխատավարձերի թերհայտարարագրումը, արտագաղթը և այլն: Միննույն տոկոսադրույքի սահմանումն ամենաազնիվն է՝ տոկոսադրույքը նույնն է, սակայն ավելի շատ ստացողն իր ստացածին համամասնորեն ավելի շատ է հարկ վճարում, քան քիչ ստացողը, սակայն երկուսն էլ վճարում են նույն տոկոսի չափով:	չի հանգեցնելու:	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր «Ելք» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյան	Նախագծի 61-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 60-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռքբերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռքբերելուն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով վերադարձման ենթակա եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող	Ներկայացված առաջարկության ընդունումը հակադրվում է ՀՀ կառավարության նպատակադրումներին, քանի որ մեր կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 55 մլն. դրամի շեմը բավարար չեմ է Երևան քաղաքում մինչև 110 քմ բնակարան ձեռքբերելու համար: Հետևաբար գտնում ենք, որ առաջարկվող շեմը բնակչության սոցիալական խնդիրների լուծման և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման տեսանկյուններից օպտիմալ	Չի ընդունվել:

		ֆիզիկական անձանց չի վերադարձվում, եթե բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման գործարքի պայմանագրային արժեքը գերազանցում է 65 միլիոն դրամը»:	շեմ է:	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր «Ելք» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյան	Նախագծի 61-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 60-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<3. հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունը 2018 թվականի հունվարի 1-ից հետո կարող է կիրառվել վարկառու և համավարկառու ֆիզիկական անձանց մեկից ավելի հիպոտեկային վարկերի դեպքում, միայն եթե այդ վարկերի ընդհանուր պայմանագրային արժեքը և վերադարձվող եկամտային հարկի ընդհանուր գումարը չի գերազանցում սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված սահմանաչափերը:>>:	Ներկայացված առաջարկության ընդունումը հակադրվում է ՀՀ կառավարության նպատակադրումներին, քանի որ ՀՀ կառավարության նպատակադրումը այն է, որ եկամտային հարկի վերադարձի հնարավորությունից օգտվեն բնակարանային ապահովման խնդիր ունեցող անձինք, ընդ որում պետական բյուջեի միջոցների արդյունավետ ծախսման տեսանկյունից տրամաբանական է, որ պետությունը այդ խնդիրների լուծմանը մասնակից դառնա միայն մեկ անգամ:	Չի ընդունվել:
ՀՀ կառավարություն	Նախագծի 29-րդ, 71-74-րդ, 77-րդ, 80-83-րդ հոդվածներ	Առաջարկվում է վերանայել հանրային սննդի օբյեկտների հարկման՝ Օրենսգրքով ամրագրված կարգավորումները: Մասնավորապես, առաջարկվում է մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը վերականգնել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող արտոնագրային հարկով հարկման համակարգը, իսկ 2018 թվականի հուլիսի 1-	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:	Ընդունվել է:

		ից հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հարկում տեղափոխել շրջանառության հարկով հարկման համակարգ: Առաջարկվում է սահմանել, որ շրջանառության հարկ հաշվարկվելու է իրացման շրջանառության 10 տոկոսից նվազեցնելով կատարվող ձեռքբերումների 6 տոկոսը:		
ՀՀ կառավարություն	Նախագծի 48-րդ հոդված	Առաջարկվում նախագծի 48-րդ հոդվածով առաջարկվող լրացումից հանել միանվագ գործարքների մասով 300 հազար դրամի սահմանափակումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 73-րդ հոդված	Առաջարկվել է կարգավորել շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցում կատարելու ընթացքում առկա ապրանքային մնացորդների մասով կատարված ծախսերից օգտվելու հետ կապված հարցերը:	Ընդունվել է: Նախագծում ավելացվել է նոր հոդված, որով սահմանվել է, որ շրջանառության հարկից հարկման ընդհանուր համակարգ անցում կատարելու ժամանակ, առևտրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների կարող են օգտվել ապրանքների ձեռքբերման ժամանակ կատարված ծախսերի՝ շրջանառության հարկից չնվազեցված մասից՝ դրանք ուղղելով շահութահարկով հարկվող համախառն եկամտից նվազեցմանը:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 84-րդ հոդված	Առաջարկվել է Օրենսգրքով հստակեցնել, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված դրույթների վերաբերյալ պաշտոնական	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:

		պարզաբանումները հարկային մարմինը տրամադրում է դրանք համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ:		
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 14-րդ կետ, 6-րդ հոդվածի 2-րդ կետ, 16-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետեր, 53-րդ հոդված, 59-րդ հոդված, 74-րդ հոդված, 103-րդ հոդված	Առաջարկվել է նախագծում կատարել թվով 7 հստակեցնող և խմբագրական բնույթի փոփոխություններ:	Ընդունվել են: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է հարակից օրենքների նախագծերի փաթեթում ներառված՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում հստակեցնել, որ նշյալ նախագծի 4-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:	Ընդունվել է: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 28-րդ հոդված 1-րդ կետ	Առաջարկվում է նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասի «շինարարական մոնտաժային աշխատանքներ իրականացնող հարկ վճարողների կողմից շինարարական մոնտաժային աշխատանքներ իրականացնելու համար տեղափոխվող	Ընդունվել է: Նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		հիմնական միջոցների, գործիքների և այլ հարմարանքների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից տեղափոխվող հիմնական միջոցների, ինչպես նաև» բառերով:		
--	--	---	--	--